

**«Հայաստանի Հանրապետության կանանց հիմնախնդիրներով
զբաղվող ՀԿ-ների ետպեկինյան գործունեության մասին
զեկույց»**

ՀԿ-ՆԵՐԻ ՑԱՆԿ

1. «Արմավիրի կանանց խորհրդի տարածաշրջանային ասոցիացիա» ՀԿ, հասցե՝
 ք. Արմավիր, Հանրապետության 32, հեռ.՝ (037) 6 83 16, 6 26 84
2. «Ապավեն» բարեգործական ՀԿ, հեռ.՝ 53 80 51, էլ.փոստ՝ **itici@web.am**
3. Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Երևան 375010, 4 Տիգրան Մեծի, ## 38,
 39, 40, Հեռ./Ֆաքս (3741) 58 15 83, Էլեկտրոնային հասցե՝ **aawue@arminco.com**
4. «Արմվյանի կանանց տարածաշրջանային ասոցիացիա» ՀԿ, հասցե՝ Արմվյան,
 Բարեկամության 1, հեռ.՝ (022) 2 14 22, 2 15 24
5. «Աննա» Սպառողների Ազգային Ասոցիացիա, հասցե՝ Գավիթ Անհաղթ 23, հեռ.՝ 24 92 04,
 էլ.փոստ՝ **anna_cna@infocom.am**
6. «Գործարար կին» ՀԿ, հասցե՝ Տերյան 56, քն.5, հեռ.՝ 58 27 76, էլ.փոստ՝ **bw-NGO@yahoo.com**
7. Նոյեմբերյանի կանանց տարածաշրջանային ասոցիացիա, հասցե՝ Նոյեմբերյան,
 Շիրազ 2, հեռ.՝ (066) 2 20 98, 2 20 96
8. Հայաստանի գործարար կանանց ասոցիացիա, հասցե՝ ք. Վանաձոր, Բանակի 10,
 հեռ.՝ (051) 2 53 35, (09)477050, էլ.փոստ՝ **bwca@arminco.com**
9. «Համագործակցություն» կանանց հասարակական կազմակերպություն,
 հեռ.՝ 56 29 99, էլ.փոստ՝ **simonyan_e@yahoo.com**
10. «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ, հասցե՝ ք. Մարտունի, Պռոշյան 8,
 հեռ. (062) 4-43-00, 4-22-01, էլ.փոստ՝ **kananc@arminco.com, ganahit@arminco.com**
11. «Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպություն,
 հասցե՝ Երևան 375009 Կորյունի 14, հեռ.՝ 266-535, 777-321, գրասենյակ՝ 521-526,
 էլ.փոստ՝ **z_caravan@yahoo.com**
12. «Շողեր միություն» ՀԿ, հասցե՝ Երևան, Մովսես օրենսգու 47, քն.108,
 հեռ. (3741) 55 47 12, էլ.փոստ **hasmikas@freenet.am; shogher@mail.ru; shogher@ngoc.am**
13. Սպիտակի «Շողեր» մանկապատանեկան կենտրոն, հասցե՝ Լոռու մարզ, Սպիտակ,
 Իսախանյան քաղամաս, Շվեցարական1, հեռ. (055)2 37 91, 271362, էլ.փոստ՝ **armywca@yahoo.com**
14. Հայաստանի «Զինվորի մայր» բարեգործական կոմիտե, հասցե՝ Խանջյան 5,
 հեռ.՝ 52 32 02, 52 99 31, էլ.փոստ՝ **armgreta@arminco.com**
15. «Հայաստանի մայրության ֆոնդ» ՀԿ, հասցե՝ Ֆանարջյան 55, հեռ. 28 75 49,
 էլ. փոստ՝ **maternity@infocom.am**
16. «Կանանց հանրապետական խորհուրդ» ՀԿ, հասցե՝ Արմվյան 3, հեռ. 58 51 64,
 էլ. փոստ. **nora@arminco.com**
17. Կանանց իրավունքների կենտրոն ՀԿ, հասցեն՝ Արմվյան փող. 21/34, Երևան, ՀՀ,
 հեռ. (374.1) 542828, էլ. փոստ՝ **wrcarm@arminco.com**
18. Հայ օգնության միություն (ՀՕՄ) հայաստանյան շրջանային վարչություն,
 հասցե՝ Նալբանդյան 116, հեռ.՝ 56 75 13, էլ.փոստ՝ **ars@arminco.com**
19. Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների
 տեղական և տարածաշրջանային ցանց
20. Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ, հասցեն՝ Արմվյան փող. 15/37,
 Երևան, ՀՀ հեռ.՝ (374.1) 561320, էլ. փոստ՝ **cdcs@arminco.com**

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի կանանց շարժման արդի փուլը սկզբնավորվել է 1988 թվականին, երբ քաղաքացիական ակտիվության վերելքի և դարաբաղյան հակամարտության, Մսիտակի երկրաշարժի հետևանքների համատեքստում ձևավորվեցին կանանց առաջին խմբերն ու կազմակերպությունները, որոնք ստանձնեցին փախստականներին և երկրաշարժից տուժած բնակչությանը մարդասիրական օգնություն ցույց տալու առաքելությունը:

Կանանց խնդիրներին նվիրված 4-րդ համաժողովը, որ կայացավ Պեկինում, իրավամբ համարվում է Հայաստանի կանանց շարժման շրջադարձային կետ: Պեկինից հետո կանանց հասարակական կազմակերպությունների ձևավորման նոր ալիք բարձրացավ, եղածներն էլ ընդլայնեցին իրենց գործունեությունը, վերափոխվեցին՝ նախապատվությունը տալով առավելապես զարգացման ծրագրերին:

Ներկայումս, ըստ տարբեր գնահատականների, Հայաստանում գործում են շուրջ 60 կազմակերպություններ, որոնց գոծունեությունն այս կամ այն չափով առնչվում է կանանց հիմնահարցերին և Պեկինի Գործողությունների ծրագրի կենսագործմանը:

Գրքույկում ներկայացված է գործող կազմակերպությունների մի մասի գործունեությունը, սակայն, կարծում ենք, այն կարող է հստակ պատկերացում տալ, թե ինչ նպաստ են բերել Հայաստանի կանանց կազմակերպությունները երկրի ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության ձևավորման, սոցիալական լարվածության թուլացման և կայուն զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության, կնոջ սոցիալական կարգավիճակի բարձրացման, կառավարման և որոշումների ընդունման մակարդակում կանանց ընդգրկման գործընթացներին:

ԱՐՄԱՎԻՐԻ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

1995-2005թթ. Արմավիրի կանանց խորհուրդը կլոր սեղանների, սեմինարների, խորհրդակցությունների միջոցով մարզի հասարակայնությանը ներկայացրել է է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի դրույթները: Միջոցառումներին մասնակցել են կանանց հասարակական կազմակերպություններ, կին պատգամավորներ, ավագանիներ, երիտասարդ աղջիկներ և կանայք:

- Մարզի համայնքային կառույցներին ներկայացվել է Կանանց հանրապետական խորհրդի (ԿՀԽ) «Պատասխանատվություն և պահանջ» հետպեկինյան գործողությունների ծրագիրը:
- Մարզում քննարկվել են ԿՀԽ-ի առաջարկությունները կանանց վիճակի բարելավման 1998-2000թթ. ազգային ծրագիրը կենսագործելու ուղղությամբ:
- Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել են ամենամյա միջոցառումներ:
- ԿՀԽ -ի «Կանայք, գեղերը և տեղական ինքնակառավարումը» ծրագրի շրջանակներում համայնքներում կազմակերպվել են կլոր սեղաններ:
- «Կահիրե-Երևան. 5 տարի անց» ծրագրի շրջանակներում մարզում քննարկվել է Կահիրեի միազգային կոնֆերանսի որոշումների կատարման ընթացքը Հայաստանում:
- ԿՀԽ-ի երևանյան գրասենյակի աջակցությամբ 2003թ. և 2004թ. կազմակերպվել են «21-րդ դարի երիտասարդ լիդերներ» դպրոցի դասընթացներ: Նպատակը՝ երիտասարդությանը մասնակից դարձնել հասարակական կյանքին և կանանց շարժման մեջ ապահովել սերնդափոխությունը:
- Կառույցին կից ձևավորվել է երիտասարդական ֆորում:
- Ասոցիացիան ակտիվորեն մասնակցել է ԿՀԽ-ի «Դիտորդական առաքելություն» ծրագրի իրականացմանը:
- Մի շարք համայնքներում ԿՀԽ-ի երևանյան գրասենյակի հետ համատեղ քննարկվել է 2004թ. ապրիլի 8-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ. ազգային ծրագիրը», մարզպետի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկվել են ՀԿ-ների ներկայացուցիչներ, Ազգային ծրագրի իրագործման համար մշակվել է միջոցառումների պլան:

Ասոցիացիան իշխանությունների, ՏԻՄ-երի, ՁԼՄ-ների և ՀԿ-ների հետ համագործակցության հարուստ փորձ է ձեռք բերել:

«ԱՊԱՎԵՆ»

«Ապավեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը հանդիսանում է «Ապավեն» հայկական միջազգային բարեգործական հասարակական կազմակերպության իրավահաջորդը: Այն ստեղծվել է 1989թ՝ Սպիտակի աղետալի երկրաշարժից տուժածներին առողջապահական և մարդասիրական օգնություն ցույց տալու նպատակով: Կազմակերպության հիման վրա ստեղծվել են 36 հասարակական կազմակերպություններ, որոնցից 34-ի նախագահները կանայք են: Ստեղծվել է ցանց այն հասարակական կազմակերպությունների միջև, որոնք զբաղվում են կանանց հիմնախնդիրներով: «Ապավեն» ՀԿ-ն հանդիսանում է տվյալ ցանցի ստեղծման ակտիվ մասնակիցը: 2003թ.-ից «Ապավեն» ՀԿ-ն հանդիսանում է «աղաղության կռալիցիայի» լիիրավ անդամ:

Պեկինյան գործողությունների ծրագրի դրույթների ապահովում

«Ապավեն» բարեգործական հասարակական կազմակերպության գործունեությունը նվիրված է նրա անդամների, կամավորների և աջակիցների ներուժի միավորմանն ու նպատակաուղղմանը Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական, քաղաքացիական, իրավական հասարակության ձևավորմանն ու կայացմանը, աղքատության նվազեցման գործընթացների զարգացմանը:

«Ապավեն» ՀԿ-ի գործունեության շրջանակները ներառում են բարեգործության բոլոր ձևերը՝ բժշկական, իրավաբանական աջակցություն, հոգևոր, մշակութային և մարզական ծրագրեր՝ հասարակության խոցելի խմբերի՝ տարեցների, հաշմանդամների, պատերազմի վետերանների, կանանց, ծնողազուրկ երեխաների, բազմանդամ ընտանիքների և այլոց համար:

Առողջապահական ծրագրեր

1997-1998թթ. Երևանի մետրոպոլիտենի 5 կայարաններում գործել են ուղևորներին առաջնային բուժօգնություն ցուցաբերող անվճար բուժկետեր: 4000 մարդ (այդ թվում 3600 կին) ստացել են առաջին բուժօգնություն: Մետրոպոլիտենում բարեգործական բուժկետերի գործունեության ընթացքում ոչ մի մահվան դեպք չի գրանցվել:

«Կանայք հանուն խաղաղության» ծրագիր

- Ամեն տարի Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակից 400 կին վետերանների, համակենտրոնացման ճամբարների նախկին գերիների, Լենինգրադի պաշարման ենթարկվածների, Արցախյան պատերազմի վետերանների մասնակցությամբ «Ո՛չ պատերազմին» կարգախոսով կազմակերպվում են հանդիսավոր միջոցառումներ և այցելություն Անհայտ զինվորի, Եռաբլուրի, Եղեռնի զոհերի հուշահամալիրներ:

- Հավաքվել են փաստաթղթեր, որոնք վկայում են 1945 թվականին 15 կին վետերանների մուտքը Բեռլին: Այդ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ պաշտպանության նախարարություն: Տվյալ 15 կանայք ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյանի հրամանով հանդիսավոր պայմաններում պարգևատրվել են «Մարշալ Բաղրամյան» մեդալով:
- Ստեղծվել է «Կանայք հանուն խաղաղության» ակումբը, որի նպատակն է պատերազմի արհավիրքներն ապրած վետերանների հետ գործընկերային հարաբերությունների հիման վրա դաստիարակել երիտասարդությանը, միավորել կանանց՝ անկախ տարիքից և քաղաքական հայացքներից:
- Կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ երեք սերունդների՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի, Դարաբաղյան հակամարտության մասնակից կին վետերանների և մեր օրերի երիտասարդների մասնակցությամբ:
- «Կանայք հանուն խաղաղության» ակումբը հանդես է եկել իր ուղերձով՝ կոչ անելով համաշխարհային հանրությունը կասեցնել նոր արյունահեղությունները, մեր ժամանակների բոլոր հակամարտություններն ու հիմնախնդիրները լուծել բարի կամքի, փոխադարձ համաձայնության, խաղաղ բանակցությունների միջոցով: «Ապավենը» դիմել է բոլոր ժողովուրդներին, պետությունների ղեկավարներին, կառավարություններին, պառլամենտներին, Միավորված ազգերի կազմակերպությանը, միջպառլամենտական համագումարներին՝ խնդրելով միանալ իր պահանջին և հանդես գալ խաղաղության պաշտպանությամբ ամբողջ աշխարհում:
- Վերին Դ-վիճի և Երևան քաղաքի թիվ 35, 72, 190 դպրոցներում կազմակերպվել է շարադրությունների մրցույթ՝ «Ինչպես պահպանել խաղաղությունը մեր երկրում և ողջ աշխարհում» և « աղաղություն ամենեցուն» թեմաներով: Դպրոցականների շրջանում թանկ է խաղաղության պահպանման գաղափարը, նրանք դատապարտում են այն տարրերի գոյությունը, որոնք ծնում են բռնարարքներ, պատճառում են բազում արհավիրքներ և անդառնալի կորուստներ: Նրանք կոչ են անում ճշմարիտ դասեր քաղել պատմության էջերից, միավորել ջանքերը հանուն աշխարհի ժողովուրդների բարգավաճ ապագայի: Դպրոցներում մրցութային փուլը հաղթահարել է 23 աշակերտ: Այս ձեռնարկումը հնարավորություն տվեց եզրակացնելու, որ դպրոցներում կարելի է և անհրաժեշտ է անցկացնել խաղաղարարական դասեր, գործնական պարապմունքներ, և հարկ է դպրոցականներին դիտել ոչ միայն դաստիարակության օբյեկտ, այլև խաղաղասիրական գործընթացների կարգավորման ակտիվ մասնակից:
- Իրականացվել է ստորագրահավաք «Կանայք հանուն խաղաղության» խորագրով: Ընդհանուր առմամբ հավաքվել է մոտ 6000 ստորագրություն: Ստորագրահավաքը նաև հետազոտական նպատակ է հետապնդում:

Ուսուցողական ծրագրեր

- ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամի (ՅՈՒՆԻՖԵՄ) «Կանայք հանուն հա-

կամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Կանայք հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման գործընթացներում» դասընթացը:

- Կազմակերպության «Կանայք հանուն խաղաղության» ակումբի գործունեության միջոցով (համաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ, տեղեկատվության տարածում) իրականացվել է մարդասիրության, գթասրտության և անշահախնդիր փոխօգնության գաղափարների և տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատման քարոզչություն:
- Անապահով և խոցելի խմբերի (հաշմանդամներ, գործազուրկներ, սոցիալական որբեր, տարեցներ, կանայք և այլն) համար իրականացվում են ոչ ակադեմիական ուսուցման ծրագրեր ՀՀ գործող օրենքների, մարդու իրավունքների, գենդերային իրավահավասարության, Եվրոպական սոցիալական խարտիայի, փոքր բիզնեսի (այդ թվում ֆերմերային տնտեսությունների) զարգացման, առողջ ապրելակերպի, ազգային մշակույթի և ավանդույթների, բնապահպանության վերաբերյալ:
- Անցկացվել են ուսուցողական դասընթացներ և գործնական պարապմունքներ «Հակամարտությունների հաղթահարում դպրոցներում» թեմայով: Դեռևս վաղ դպրոցական տարիքից կարևոր է հասկանալ, որ յուրաքանչյուր անհատ պատասխանատվություն է կրում իր երկրի խաղաղության համար: Հակամարտությունների խաղաղ լուծման գիտելիքները կօգնեն կանխել մեր դպրոցականների շրջանում ծագող կոնֆլիկտները, կնպաստեն նրանց վարքագծի և բնավորության մեջ դրական փոփոխություններին:
- Կազմակերպությունը մասնակցել է Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի մշակմանը:
- Կազմակերպության կողմից իրականացվել են հետևյալ հետազոտությունները.
 - «Կանայք և քաղաքականությունը»,
 - «Կանայք և ընտրությունները»,
 - «Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ռիսկի ենթակա երեխաներին ցուցաբերվող օժանդակության պետական համակարգի գործունեության ուսումնասիրություն»:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Հիմնադրվել է Երևանում 1995թ.՝ Կանանց դրության վերաբերյալ Պեկինում կայացած 4-րդ համաշխարհային խորհրդաժողովից հետո, գիտության, կրթության, առողջապահության և մշակույթի 23 կին ներկայացուցիչների կողմից:

Ասոցիացիայի **գործունեության սկզբունքներն են** իրավահավասարությունը, կա-

մավորությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

Ասոցիացիայի **առաքելությունն է՝** աջակցել և նպաստել Հայաստանում ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնություններին, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը, հասարակության մեջ կանանց կարգավիճակի և քաղաքացիական նախաձեռնությունների իրագործմանը, «խաղաղության մշակույթի» քարոզչությանը և խաղաղասիրական գործընթացների իրականացմանը:

Գործունեության տասը տարիների ընթացքում կազմակերպությունն ընդլայնել է իր աշխարհագրությունը՝ հանրապետության բոլոր մարզերում ստեղծելով 29 մասնաճյուղեր: Ասոցիացիայի շրջանակներում գործում են Գեներալային հետազոտությունների կենտրոնը, աղաղության և ժողովրդավարության կենտրոնը, «Գործողությունների քաղաքականություն» տեղեկատվական-վերլուծական կենտրոնը և Կանանց լիդերության դպրոցը:

Ասոցիացիայի իրականացրած գործունեությունը

Ասոցիացիան իր գործունեության տասը տարիների ընթացքում կազմակերպել է 9 միջազգային խորհրդաժողովներ:

- «Փոխակերպվող հասարակության կանանց հիմնախնդիրները և իրավունքները. իրականություն և հեռանկարներ», 1997թ., հուլիս:
- «Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ», 1997թ., հոկտեմբեր-նոյեմբեր:
- «Հասարակությունը և կինը: Համագործակցություն հանուն հզորացման», 1998թ., հոկտեմբեր:
- «Խաղաղության մշակույթ. ժողովրդավարություն և մշակույթների երկխոսություն», 1999թ., հուլիս:
- «Հայաստանի կանայք 21-րդ դարում: Գեներալային հավասարություն. կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցություն», 2000թ., ապրիլ:
- «Քաղաքակրթությունների երկխոսություն. ժողովրդավարություն և խաղաղություն», 2001թ., հոկտեմբեր:
- «Կանանց շարժումը Հայաստանում. նախապատվություններ և զարգացման հեռանկարներ», 2002թ., հուլիս:
- «Ժողովրդավարության կոնսուլիդացում. քաղաքացիական հասարակությունը գլոբալացման հեռանկարում», 2003թ., մարտ:
- «Մասնակցության ժողովրդավարություն. քաղաքացիական նախաձեռնություններ և պատասխանատվություն», 2004թ., հուլիս:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հիմնադրվել է 1996 թվականին

Գենդերային հետազոտությունների կենտրոնի գործունեությունը նպատակաուղղված է.

- ժամանակակից հասարակության գենդերային մշակույթի հետազոտմանը, գենդերային կարծրատիպերի հաղթահարման հնարավոր ուղիների մշակմանը,
- գենդերային հետազոտությունների տեսության և մեթոդաբանության մշակմանը,
- կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների, հավասար հնարավորությունների և հավասար արդյունքների ապահովման մեխանիզմների մշակմանը,
- գենդերային կրթության բնագավառում պետական քաղաքականության հայեցակարգային հիմունքների և գենդերային կրթության պետական չափորոշիչների նախագծի մշակմանը, բարձրագույն կրթության և միջնակարգ դպրոցի համակարգերում գենդերային կրթության ծրագրերի մշակմանը և դասավանդման ներդրմանը,
- կանանց նկատմամբ խտրականության դրսևորման և բռնության պատճառների ուսումնասիրությանը և հաղթահարման ուղիների մշակմանը,
- կանանց սոցիալ-քաղաքական շարժումների, քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացներում կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության, կանանց շարժման՝ որպես հասարակական շարժման, ռազմավարության մշակմանը,
- հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների լիդերների և ակտիվիստների, օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների, լրագրողների գենդերային իրազեկության բարձրացմանը,
- ՉԼՄ-ների միջոցով հասարակության մեջ գենդերային գիտելիքների տարածմանը և գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը:

Գենդերային հետազոտությունների կենտրոնն իր գործունեությունն իրականացրել է գենդերային ամառային դպրոցների, սեմինարների, կլոր սեղանների կազմակերպման, գենդերային հիմնախնդիրներին նվիրված խորհրդաժողովների անցկացման, բարձրագույն կրթության և միջնակարգ դպրոցի համակարգում գենդերային կրթության ինստիտուցիոնալացման, գենդերային հիմնախնդիրներին նվիրված ժողովածուների մատենաշարի և ուսումնական ձեռնարկների հրատարակման, Գենդերային հետազոտությունների կենտրոնի մասնագիտական գրադարանի ստեղծման, գենդերային իրազեկության բարձրացման և համատեղ ծրագրերի իրագործման ուղղությամբ իշխանական կառույցների հետ նպատակաուղղված աշխատանք իրականացնելու, ՉԼՄ-ների միջոցով գենդերային գիտելիքներ տարածելու, տեղեկատվական և կրթական ծրագրերի միջոցով հասարակական շարժման և քաղաքական կուսակցությունների կանանց և տղամարդկանց գենդերային իրազեկությունը բարձրացնելու միջոցով:

Կենտրոնի շրջանակներում կազմակերպվել են երկշաբաթյա առաջին և երկրորդ գենդերային դպրոցները, ուսանողների և երիտասարդ հետազոտողների 3 խորհրդաժո-

ղովներ, գենդերային առարկաներ դասավանդող դասախոսների և ուսուցիչների մասնակցությամբ «Գենդերային կրթություն. նոր հարացույց» թեմայով սիմպոզիումը:

Իր գոյության ինը տարիների ընթացքում Գենդերային հետազոտությունների կենտրոնը դարձել է հայ հասարակության գենդերային մշակույթն ուսումնասիրող գիտահետազոտական լաբորատորիա, գենդերային կրթության ինստիտուցիոնալացմամբ զբաղվող կարևոր օղակ, բարձրագույն կրթությամբ կանանց համար ոչ ֆորմալ կրթությունը շարունակելու հնարավորություն ընձեռող, լիդերական ունակությունները զարգացնող, կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվությունը խթանող յուրահատուկ կառույց:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

հիմնադրվել է 2000 թվականին

Կենտրոնի խնդիրներն են.

- Տնտեսական եւ քաղաքական վերափոխումների եւ հասարակությունում կանանց ու տղամարդկանց սոցիալական կարգավիճակի փոփոխության վրա դրանց ազդեցության վերլուծությունը:
- Հանրապետության քաղաքական գործընթացների, ժողովրդավարական բարեփոխումների ընթացքի մասին բարձրագույն կրթությամբ կանանց և տղամարդկանց կարծիքների ուսումնասիրությունը:
- Անցումային շրջանի հասարակության պայմաններում քաղաքացիական ակտիվության աստիճանի, քաղաքական մասնակցության գենդերային տեսանկյունների եւ կանանց էլեկտորալ վարքի բացահայտումը:
- Հասարակության գենդերային մշակույթի հետազոտումը:
- Պատերազմի եւ խաղաղության, հայ հասարակության հանդուրժողականության, քաղաքական եւ քաղաքացիական երկխոսության մշակույթի մասին հասարակական կարծիքի բացահայտումը:
- Պետական քաղաքականության եւ օրենսդրության գենդերային փորձաքննության անցկացումը:

2000-2004 թթ. ընթացքում կենտրոնի գործունեության ընթացքում անց են կացվել 49 կլոր սեղաններ եւ բանավեճեր, որոնք նվիրված են եղել քաղաքացիական հասարակության կայացմանը և հասարակությունում ժողովրդավարության խորացմանը, Հայաստանում ժողովրդավարության անշրջելիության նախապայմանների ստեղծման գործում քաղաքացիական հասարակության ինստիտուտների դերի բարձրացմանը, քաղաքացիների իրավական իրազեկությանը և իրենց իրավունքների իրացման համար պատասխանատվությանը, միջազգային ինտեգրման և գլոբալացման հիմնախնդիրներին և նպատակաուղղված են եղել կանանց եւ տղամարդկանց ակտիվ դիրքորոշման ձեւավորմանը հասարակական-քաղաքական կյանքում ու ընտրական գործընթացներում, քաղաքական կուսակցությունների հետ աշխատանքի աշխուժացմանը, քաղաքականության մեջ կանանց

մասնակցության ակտիվացմանը:

Կլոր սեղանների աշխատանքներին, բանավեճերին և երկխոսություններին մասնակցել են ավելի քան 1500 կանայք և տղամարդիկ՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Աշտարակում, Կապանում, Էջմիածնում և Արմավիրում:

Իր գործունեության 5 տարիների ընթացքում Ժողովրդավարության եւ խաղաղության կենտրոնը դարձել է յուրօրինակ «հանրային գիտաժողով», որտեղ հասարակայնությունն ակտիվ կանանց եւ տղամարդկանց հնարավորություն է տրված մասնակցելու բանավեճերի՝ նվիրված հասարակական զարգացման այնպիսի հրատապ հիմնահարցերի, ինչպիսիք են ժողովրդավարության մշակույթը, քաղաքացիական եւ քաղաքական երկխոսությունը, քաղաքացիական համաձայնությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, խաղաղարար գործունեությունը, ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, ընտրական գործընթացների կատարելագործումը, քաղաքացիական մասնակցության եւ քաղաքացիական պատասխանատվության բարձրացումը, ինչպես նաեւ տեսակետ ձևավորել հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացների վերաբերյալ:

ԿՐԹԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ասոցիացիան, սկսած 1996թ., իրականացրել է հետևյալ կրթական-տեղեկատվական ծրագրերը.

- «**Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ**», որի նախապատվությունն է աջակցությունը Հայաստանում ժողովրդավարական գործընթացներին, հասարակության մեջ կանանց կարգավիճակի բարձրացմանը, քաղաքականության բնագավառում և կառավարման մարմիններում, որոշումների ընդունման բոլոր մակարդակներում կանանց ներգրավմանը, մարդու իրավունքների, կանանց շահերի պաշտպանությանը, գենդերային մոտեցման ձևավորմանը, տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների գաղափարախոսության ձևավորմանը:
Ծրագրի շրջանակներում անց են կացվել 5 միջազգային խորհրդաժողովներ, 5 եռօրյա սեմինար-թրենինգներ, 26 մեկօրյա և երկօրյա սեմինարներ Երևանում և մարզերում:
- «**Խաղաղության մշակույթ հանուն զարգացման**», որի նախապատվությունն է « աղաղության մշակույթի» քարոզչությունը՝ հիմնված ազատության, արդարության, ժողովրդավարության սկզբունքների վրա, հանդուրժողական աշխարհայացքի ձևավորումը, բախումների կանխարգելման մշակույթի սերմանումը և աջակցությունը խաղաղասիրական գործընթացներին: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են միջազգային խորհրդաժողով, տարածաշրջանային սեմինարներ, կլոր սեղաններ:

- **«Կինը և հասարակությունը: Գենդերային հավասարությունը ժողովրդավարության զարգացման հեռանկարում»**, որի նախապատվությունն է քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության զարգացման, կանանց իրավունքների եւ շահերի պաշտպանության, քաղաքացիական մասնակցության, լոբբինգի նոր տեխնոլոգիաների, սոցիալական համագործակցության, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների պաշտպանության գործում կանանց հասարակական կազմակերպությունների կոալիցիաների դերի և գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացումը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է միջազգային խորհրդաժողով, 19 երկօրյա եւ մեկօրյա սեմինարներ մարզերում և եռօրյա սեմինար-թրենինգ:
- **«Կանանց նախաձեռնություններ»**, որը նպատակաուղղված է ժողովրդավարության մշակույթի ձևավորմանը, հասարակության վերափոխության գործընթացներում կանանց քաղաքացիական ակտիվության բարձրացմանը, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է միջազգային խորհրդաժողով, 14 երկօրյա և 22 մեկօրյա սեմինարներ Երևանում և հանրապետության մարզերում:

Կրթական ծրագրերի շրջանակներում 2000 թվականից գործում է Կանանց լիդերության դպրոցը, որի նպատակն է.

- փոխակերպվող հասարակության նոր պահանջներին համապատասխան կին լիդերների պատրաստումը,
- կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվության խթանումը,
- կանանց իրավունքների պաշտպանության և քաղաքական մասնակցության ընդլայնմանն ուղղված աջակցությունը:

Դպրոցի դասընթացները ներառում են 4 կրթական մոդուլներ՝ քաղաքական գիտելիքներ, իրավական գիտելիքներ, տնտեսական գիտելիքներ, հասարակական գործունեության կազմակերպման տեխնոլոգիաներ:

Այդ մոդուլների շրջանակներում ունկնդիրները գիտելիքներ են ձեռք բերում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության, տնտեսության, ժամանակակից հասարակության գենդերային հիմնախնդիրների, ֆեմինիզմի պատմության և տեսության, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և ազգային օրենսդրության, կանանց իրավունքների պաշտպանության միջազգային իրավապաշտպան համակարգի, ՄԱԿ-ի կոնվենցիաների և փաստաթղթերի, կանանց միջազգային շարժման, Հայաստանի հասարակական, մասնավորապես՝ կանանց կազմակերպությունների գործունեության, գլոբալացվող աշխարհում կանանց շարժման դերի և տեղի, հասարակության մեջ կանանց դերի, կանանց քաղաքացիական ակտիվության ձևավորման, կանանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված ճնշման խմբերի՝ լոբբինգի, սեփական և

ուրիշների իրավունքները պաշտպանելու, կանանց կազմակերպությունների և խմբերի գործունեության կազմակերպման տեխնոլոգիաների, ձևերի և մեթոդների վերաբերյալ:

Ունկնդիրների համար երկխոսություններ են կազմակերպվում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ կառավարության անդամների, ՀՀ մարզային մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատու աշխատակիցների, հասարակական եւ քաղաքական գործիչների հետ:

Գյրոցի պարապմունքները վարում են գիտական կենտրոնների և ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ճանաչված քաղաքագետներ, փիլիսոփաներ, իրավագետներ, սոցիոլոգներ, պատմաբաններ, ազգագրագետներ, հոգեբաններ, մանկավարժներ, հասարակական գործունեության կազմակերպման տեսաբաններ և մեթոդիստներ:

Կանանց լիդերության դպրոցն ավարտել են և վկայականներ են ստացել ասոցիացիայի, այլ հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների 385 կին լիդերներ և ակտիվիստներ:

Ասոցիացիայի Էջմիածնի, Մասիսի և Վանաձորի մասնաճյուղերի նախաձեռնությամբ Կանանց լիդերության դպրոցներ են հիմնվել նաև այդ տարածաշրջաններում: Նրանց ծավալած հաջող գործունեության արդյունքում մոտ 200 կանայք և աղջիկներ հաճախել և հաջողությամբ ավարտել են այդ դասընթացները:

Ասոցիացիան իրականացնում է տեղեկատվական ծրագիր, որի շրջանակներում գործող «**Գործողությունների քաղաքականություն**» տեղեկատվական-վերլուծական հանրապետական կենտրոնը, որը էլեկտրոնային կապի շնորհիվ հնարավորություն է ընձեռում տեղեկատվություն փոխանակել այլ երկրների հասարակական կազմակերպությունների հետ: Գործում են նաև «Գործողությունների քաղաքականություն» տարածաշրջանային կենտրոններ Գյումրիում, Վանաձորում, Կապանում, Աշտարակում, Վեդիում, Գավառում, Վայոց ձորում, Դիլիջանում, Գորիսում և Մասիսում:

Մասնաճյուղերում ստեղծվել են գրադարաններ, որոնք համալրվում են ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, գենդերային հիմնախնդիրներին նվիրված գրականությամբ:

Ասոցիացիայի Լրատվական-վերլուծական կենտրոնը հրատարակել է ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության, կանանց միջազգային շարժման, ժամանակակից հասարակության գենդերային հիմնախնդիրների, ֆեմինիզմի տեսության և պատմության, հասարակությունում կանանց անվտանգության, ընտրական ժողովրդավարության, գլոբալացման գործընթացների, խաղաղության մշակույթի հիմնախնդիրներին նվիրված 6 տասնյակից ավելի գրքեր և ժողովածուներ:

Ասոցիացիան իր գործունեության ընթացքում լույս է ընծայել «Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հայերեն 30 համարներ, դրա անգլերեն և ռուսերեն հատուկ թողարկումներ:

Ասոցիացիան հրատարակել է «Գենդերային հետազոտություններ» մատենաշարի 20 հայերեն, 6 ռուսերեն և անգլերեն ժողովածուներ: Առանձին գրքերով լույս են ընծայվել «Օրենսդրության գենդերային փորձաքննություն» և «Պետական քաղաքականության հայեցակարգային հիմունքները կրթության բնագավառում: Գենդերային կրթության պետական չափորոշիչների նախագիծ» աշխատությունները, «Գենդերային կրթության հա-

մար» 9 ուսումնական ձեռնարկները:

Ասոցիացիայի Գլխավորի և Վանաձորի Գեոդեզիային հետազոտությունների կենտրոնները հրատարակել են «Հասարակության գեոդեզիային մշակույթ: Իրողություններ և հեռանկարներ», «Ջուգակշոված ժողովրդավարություն: Կանանց քաղաքացիական նախաձեռնություններ արտակարգ իրավիճակի պայմաններում», «Գեոդեզիայի սկզբնավորումը և կայացումը. երիտասարդության հայացք», «Գեոդեզիային իրավիճակի դինամիկական Գլխավորում» ժողովածուները:

Լորբինգը` փոփոխությունների հասնելու միջոց

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան իրականացրել է լոբբիստական գործունեություն:

- ՀՀ նախագահին, ՀՀ ազգային ժողով, ՀՀ կառավարություն են ներկայացվել. «ՀՀ-ում կանանց դրության բարելավման ազգային ծրագրի հայեցակարգի» նախագիծ:
- Համազգային ռազմավարական նշանակության օբյեկտների ինվեստիցիոն ծրագրերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտության մասին ուղերձ:
- «Մայառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի ընդունման անհրաժեշտության և առողջապահության համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:
- Հայաստանի կանանց հիմնախնդիրներին նվիրված խորհրդարանական լսումներում ասոցիացիան առաջ է քաշել կանանց վերաբերյալ պետական քաղաքականության և կանանց դրության բարելավման ազգային կառույց ձևավորելու անհրաժեշտության հարցը:
- Հարց է բարձրացրել ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացնելու անհրաժեշտության և ՀՀ Ընտրական օրենսգրքում համամասնական ցուցակների ներկայիս 5 տոկոսի քվոտայի խտրական նորմը փոփոխելու, առնվազն 30 տոկոսի գեոդեզիային քվոտաներ սահմանելու վերաբերյալ:
Ասոցիացիան մասնակցել է նաև հետևյալ օրենսդրական քննարկումներին.
- ԵԱՀԿ գրասենյակի կողմից կազմակերպված «Ընտրական բարեփոխումները Հայաստանում» թեմայով կլոր սեղանի աշխատանքներին:
- ՀՀ Աշխատանքային օրենսգրքի քննարկմանը նվիրված խորհրդարանական լսումներին:
- ԵԱՀԿ Հայաստանի գրասենյակի կողմից կազմակերպված «Հանրահավաքների, ցույցերի և երթերի անցկացման մասին» օրինագծի քննարկմանը:
- Ասոցիացիայի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հանրակրթության պետական կրթակարգի» քննարկմանը նվիրված կլոր սեղան, որի արդյունքում արված առա-

ջարկությունները ներկայացվել են ՀՀ վարչապետին, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովին, ՀՀ գիտության և կրթության նախարարություն:

«Օրորոց» ծրագիր

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան «Օրորոց» համազգային ծրագրի համակարգող խորհրդի անդամ է: Ծրագիրը ասոցիացիայի և կանանց ուրիշ հասարակական կազմակերպությունների նախաձեռնության արդյունքն է և ուղղված է հանրապետությունում ծնելիության մակարդակի բարձրացմանը, առողջ մայրության և մանկության պաշտպանությանը: Ծրագրի շրջանակներում հանգանակվում են դրամական և նյութական միջոցներ, և դրանց շնորհիվ նյութական աջակցություն է ցույց տրվում Հայաստանի նորածիններ ունեցող սոցիալապես անապահով ընտանիքներին:

Ասոցիացիայի միջազգային կապերը

Գործունեության տասը տարիների ընթացքում ընդլայնվել են ասոցիացիայի միջազգային կապերը: Ասոցիացիան Համալսարանական կանանց միջազգային ֆեդերացիայի, ԱՊՀ երկրների կանանց կազմակերպությունների միջազգային ալյանսի և ԱՊՀ-ԱՄՆ կանանց կազմակերպությունների կոնսորցիումի անդամ է, ինչպես նաև ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության (UNDPPI) ասոցիատիվ անդամ:

Համալսարանական կանանց միջազգային ֆեդերացիայի շրջանակներում համագործակցում է Եվրոպայի, ԱՄՆ-ի և Կանադայի համալսարանական կանանց ասոցիացիաների, ինչպես նաև ԱՊՀ երկրների հասարակական կազմակերպությունների հետ: Նրա գործընկերներն են ՌԳ կանանց անկախ համաժողովի տեղեկատվական կենտրոնը, Ռուսաստանի կանանց ինովացիոն ցանցը, ՌԳ «Սոցիալական և գենդերային քաղաքականության ինստիտուտ» հիմնադրամը, ՌԳ կանանց ոչ կառավարական միավորումների կոնսորցիումը, «Արևելք-Արևմուտք» կանանց ինովացիոն հիմնադրամը, Մոսկվայի պետական համալսարանի կանանց միությունը, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարանի Գենդերային ծրագիրը, Վրաստանի կանանց միությունը և Գենդերային ծրագիրը:

ԱՐՈՎՅԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Ասոցիացիան հիմնադրվել է որպես Կանանց հանրապետական խորհրդի (ԿՀ) մասնաճյուղ, իսկ 2002 թվականին գրանցվել է որպես առանձին կազմակերպություն և վերանվանվել «Արվյանի կանանց ասոցիացիա» (ԱԿՏԱ): Այն սերտ համագործակցում է Կանանց հանրապետական խորհրդի հետ՝ յուրացնելով այդ կառույցում կուտակված հսկայական փորձը:

Կազմակերպությունն իրականացրել է մի շարք ծրագրեր:

- Ուսումնասիրել է քաղաքի կանանց հիմնահարցերը և դրանց լուծման առաջարկություններ ներկայացրել քաղաքի ղեկավար մարմիններին:
- Մոցիլոգիական հարցումների միջոցով ուսումնասիրել է փախստական և միայնակ թոշակառու կանանց վիճակը:
- Աջակցել է մայրությանը և ընտանիքին առնչվող օրենքների մշակմանը:
- Կազմակերպել է կյոթ սեղաններ, որոնց նպատակը հասարակական կյանքում կանանց դերի բարձրացումն է:
- «Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության հետ համատեղ կազմակերպել է անվճար համակարգչային դասընթացներ զոհված ազատամարտիկների կանանց համար:
- Ընտրությունների ընթացքում կազմակերպվել են քննարկումներ խորհրդարանի բոլոր գումարումների կին պատգամավորների հետ:
- Կապ է հաստատվել Աբովյանի տարածաշրջանում գործող կազմակերպությունների և զբաղվածության կենտրոնի հետ՝ հնարավորության դեպքում կանանց աշխատանքով ապահովելու համար:
- Բացահայտվել և ուսումնասիրվել են այն ընտանիքները, որոնք սոցիալապես անապահով են և աջակցություն է ցույց տրվել նրանց «Փարոս» համակարգում ընդգրկվելու հարցում:
- Կազմակերպվել են «Բարի կամք, բարի գործ , բարի ելք», «Հայաստանի կանայք, գնահատեք ներկան, որ կերտեք ապագան» ակցիաները:
- Երիտասարդության միջոցով հասարակության քաղաքացիական ակտիվությունը խթանելու նպատակով ձևավորվել է «Երիտասարդական ֆորում»:
- 2001թ. կազմակերպությունը, երբ դեռ հանդիսանում էր ԿՀ -ի Աբովյանի մասնաճյուղը, Կոտայքի մարզում իրականացրել է IFES-ի «Քաղաքացիների իրազեկությունը և մասնակցությունը Հայաստանում» ծրագրի կանանց մասնակցությանը վերաբերող բաժինը, որի նպատակն էր բարձրացնել կանանց իրազեկությունը և խթանել անմիջական մասնակցությունը համայնքի զարգացման գործընթացներին:

«ԱՆՆԱ» ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

«Աննա» սպառողների ազգային ասոցիացիան (ԱՍԱԱ) հիմնադրվել է 1995թ.նախկինում Վաճառականների միության կազմում գործող Սպառողների իրավունքների պաշտպանության ծառայության հիման վրա (կազմակերպությունը կոչվում էր «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միություն») և 1999թ-ին միայն վերագրանցվեց ներկայիս անվամբ): 2003 թվականին, ԱՍԱԱ-ի նախաձեռնությամբ կազմավորվել և հիմնադրվել է «Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա» իրավաբանական անձանց միությունը, որն իր մեջ ընդգրկում է յոթ կազմակերպություն:

Ասոցիացիան ունի 9000-ից ավելի կամավոր անդամներ, 8 մարզային կառույցներ

(իրենց մասնաճյուղերով) և 5 մասնաճյուղեր Հայաստանի Հանրապետության մարզերում: Ասոցիացիայի կազմում ընդգրկված են գիտնականներ և տարբեր ոլորտների մասնագետներ, որոնց մեծ մասը գործունյա և քաղաքացիական հասարակության ակտիվ մասը կազմող կանայք են:

Առաքելությունը

- Պաշտպանել սպառողների իրավունքները բոլոր ոլորտներում:
- Բարձրացնել սպառողների գիտակցությունը, հատկապես կանանց, քանի որ նրանք են Հայաստանում սպառողական շուկայում գնումներ կատարողները: Կրթել կանանց, դարձնել նրանց ժողովրդավարական հասարակության լիիրավ, սեփական շահերը պաշտպանող և ապրանքային շուկայում ճիշտ կողմնորոշվող անդամներ:
- Պայքարել հանուն ազգաբնակչության առողջության պահպանման և ապագա առողջ սերնդի ձևավորման:
- Պայքարել կանանց իրավահավասարության և քաղաքացիական հասարակության զարգացման մեջ նրանց դերի բարձրացման համար:
- Ապահովել սպառողների իրազեկությունը իրավունքների, պարտականությունների ժողովրդավարացման գործընթացների վերաբերյալ:
- Սպառողին մասնակից դարձնել օրենքների մշակման, ընդունման և կիրարկման գործընթացներին:

Նպատակը

- Ունենալ օրենսդրորեն պաշտպանված և իրազեկ սպառող:

Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացված ծրագրերը

- 1999թ. ՀԿ-ների ուսուցման և տեղեկատվական միջոցների կենտրոնի դրամաշնորհով իրականացվել է *քարոզարշավ՝ ուղղված «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի քննարկմանը*: Քարոզարշավն իրականացվել է Երևանում, Սյունիքի, Շիրակի և Լոռու մարզերում: Շահառուների թիվը կազմել է 21000 մարդ (63%-ը՝ կանայք): Տպագրվել և տարածվել է «Սպառող» հանդեսը (2000 օրինակ), որը բովանդակում էր օրենքի նախագիծը: Տպագրվել և տարածվել են շուրջ 16000 օրինակ բուկլետներ և թերթիկներ: Կառավարության հանձնարարությամբ ասոցիացիայի փորձագետներն ու իրավաբանները մշակել են «Սպառողների իրավունքների պաշտպանության» մասին օրենքի նախագիծը: Ողջ քարոզարշավի ընթացքում վարվել է լոբբինգի քաղաքականություն ՀՀ նախագահի աշխատակազմում, կառավարությունում, ԱԺ-ում, Հայպետստանդարտում,

քաղաքապետարաններում և մարզպետարաններում: «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքն ընդունվեց 2001թ. հունիսի 6-ին, ԱԺ-ի արտահերթ նիստում և ուժի մեջ մտավ 2002թ. հունվարի 1-ից:

- 2000թ. «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվել է «Սպառողների իրավունքների պաշտպանության ավտոմատացված համակարգի ստեղծում (ԱՏՀ)» ծրագիրը: Արդյունքում ստեղծվեց եզակի համակարգ, որի շնորհիվ սպառողը, դիմելով ասոցիացիայի գրասենյակ, կարող է արագորեն ստույգ տվյալներ ստանալ իրեն հետաքրքրող ապրանքի (սննդամթերքի կամ լայն սպառման ապրանքի) վերաբերյալ:
- 2001-2002թթ. «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության «Հզորացման ծրագրի» դրամաշնորհով իրականացվել է քարոզարշավ՝ ուղղված «Հիվանդների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի անհրաժեշտության և բացակայության հետևանքների մասին հասարակական կարծիքի ձևավորմանը: Քարոզարշավն իրականացվել է Երևանում, Շիրակի և Արարատի մարզերում: Շահառուների թիվը կազմել է 35000 մարդ (62%-ը՝ կանայք): Մատուցվել է բժշկական և հոգեբանական խորհրդատվություն: Շուրջ 2000 օրինակ տպաքանակով տպագրվել և տարածվել է «Սպառող» հանդեսը, որի էջերում հրատարակվել է օրենքի նախագիծը: Տպագրվել և տարածվել են 18000 օրինակ բուկլետներ և թերթիկներ: Ողջ քարոզարշավի ընթացքում երեք ՀԿ-ներից բաղկացած կոալիցիայի ներկայացուցիչները պետական և տեղական ինքնակառավարման կառույցներում՝ կառավարությունում, ԱԺ-ում, առողջապահության, սոցիալական ապահովության նախարարություններում, քաղաքապետարաններում և մարզպետարաններում վարել են լոբբինգի քաղաքականություն: «Հիվանդների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է ԱԺ, անցել առաջին ընթերցումը:
- 2003-2004թթ. «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից հատկացված միջոցներով իրականացվել է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի լուսաբանում և խորհրդատվություն» նախագիծը: Շահառուների քանակը՝ 52000 մարդ: Մատուցվել են խորհրդատվական և իրավաբանական ծառայություններ: Տպագրվել և տարածվել են «Սպառող» հանդեսի շուրջ 5000 օրինակ և 17900 օրինակ բուկլետներ ու գրքույկներ:
- 2003-2004թթ. ասոցիացիան ստացել է 379 գրավոր դիմում-բողոք, որոնցից 252-ը վերաբերում էին «ԱրմենՏել» և «Թելեպլաս» ընկերությունների կողմից մատուցված անբարեխղճ ծառայություններին: 252 դիմում-բողոք ներկայացնողների վնասի ընդհանուր գումարը կազմել է 72 մլն 72 հազար դրամ: Դատարան է ներկայացվել 109 հայց, որից 70 հայցը դատարանի կողմից բավարարվել է, և սպառողը ազատվել է 28 մլն 932 հազար 946 դրամի հարկադրված վճարում կատարելուց: Ասոցիացիան դատարանում հանդես է եկել հիմնականում երեխաների (անչափահասների)

իրավունքների պաշտպանությամբ: Մնացած դիմում-բողոքների կապակցությամբ հայցերը աստիճանաբար պատրաստվում և ներկայացվում են դատարան:

Ծավալված գործունեություն, միջազգային կապեր, համագործակցություն և գործընկերներ

- Հրատարակվել և հրատարակվում է Հայաստանի Հանրապետությունում իր տեսակի մեջ եզակի տեղեկատվական-վերլուծական-խորհրդատվական «Սպառող» հանդեսը:
- Պարբերաբար ՁԼՄ-ներում հրապարակվում են տեղեկատվություններ և սպառման ոլորտի հետ կապված տարբեր հիմնախնդիրների վերլուծություններ:
- Պայմանագրեր և համաձայնագրեր են կնքվել պետական ու հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև այն լաբորատորիաների հետ, որոնք կարող են օգտակար լինել սպառողների շահերի պաշտպանության և ՀՀ ներմուծվող և արտահանվող սննդամթերքի որակը հնարավորին չափ միջազգային ստանդարտներին մոտեցնելու հարցում:
- Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է Լոնդոնի «Սպառողների համաշխարհային ասոցիացիայի» (CI) հետ (որի անդամն է 1998 թվականից), Բոննի «Սպառողների շահերի և իրավունքների պաշտպանության միության» (Agv), Կանադայի «Սպառողների ասոցիացիայի», Ռուսաստանի «Սպառողների շահերի և իրավունքների պաշտպանության ասոցիացիայի», “Спорс” ամսագրի խմբագրության, Վաշինգտոնի «Սպառողների միության», Ադրբեջանի «Ազատ սպառողների միության», Վրաստանի «Սպառողների շահերի և իրավունքների պաշտպանության միության», Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO), Ավստրալիայի «Սպառողների ասոցիացիայի» հետ:
- 1997թ. կազմակերպությունը մասնակցել է Կանադայի Մոնրեալ քաղաքում կայացած 16-րդ միջազգային կոնգրեսին՝ «Մնուցումը գիտականից վերածել գործնականի» թեմայով: Ասոցիացիան, լինելով կովկասյան հանրապետությունների միակ ներկայացուցիչը, հանդես է եկել «Ծանր սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությունը ազգաբնակչության սնուցման և առողջության վրա, հատկապես կանանց ու երեխաների» զեկուցումով:
- 2000թ. ասոցիացիան մասնակցել է «Քաղաքակիրթ հասարակության զարգացման» ծրագրին, որը կազմակերպվել էր ԱՄՆ-ում AED/USAID-ի կողմից:
- Ասոցիացիան 1998թ-ից հանդիսանում է Կովկասի սպառողների դաշնության անդամ:
- Ասոցիացիայի մասնագետները մասնակցել են «Երեխաների իրավունքների պաշտպանության մասին» Կոնվենցիայի քննարկմանը և ընդունմանը:
- Ասոցիացիայի մասնագետները մասնակցել են «Ջրամատակարարման և ջրահեռացման մասին» օրենքի լրամշակմանը, ինչպես նաև «Կրթության և գիտության

մասին» օրենքի լրամշակմանը՝ առաջարկելով դպրոցների բարձր դասարաններում և բուհերում մտցնել «Սպառողական գիտելիքների հիմունքներ» առարկան: «Սպառողական գիտելիքների հիմունքներ» ձեռնարկը և մեթոդական մշակումներն արդեն պատրաստ են տպագրության:

- Ասոցիացիայի նախագահը կառավարությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների կապակցությամբ ստեղծված հանձնաժողովի անդամ է, իսկ նրա 21 կամավոր անդամներ մասնակցել են հարկային տեսչության վերահսկման գործընթացին:
- Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է արդյունաբերության և առևտրի, սոցալպահովության, առողջապահության, գյուղատնտեսության նախարարությունների հետ:
- Կատարվել և կատարվում է ՀՀ ներմուծվող և տեղում արտադրվող սննդամթերքների և լայն սպառման ապրանքների որակի ու պիտանիության վերլուծություն:
- Ասոցիացիան նպաստել է ստանդարտացման, սերտիֆիկացման, չափաբանության մասին օրենքների ընդունմանը:
- Ասոցիացիայի նախագահը կառավարության կողմից ընտրվել է համապատասխանության հավաստման բնագավառում սերտեֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման խորհրդի անդամ:
- Ասոցիացիայի նախագահը հանդիսանում է ԱԺ-ի սոցիալական և առողջապահության մշտական հանձնաժողովի փորձագետ:
- 2002թ. ասոցիացիայի նախագահն ու փոխնախագահը Հռոմում մասնակցել են Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) վեհաժողովին:
- 2003-2004թթ. ասոցիացիան իրականացրել է ՀՀ-ում արտադրվող կաթնամթերքի, պաղպաղակի, ալրային և շաքարային հրուշակեղենի արտադրության և իրացման որակի լայնածավալ մոնիտորինգ: Վերլուծվել են սպառողական շուկայում առավել կայուն տեղ զբաղեցնող կաթնամթերքի, պաղպաղակի, ալրային և շաքարային հրուշակեղենի արտադրության տեսականիները, որոնք ենթարկվել են ֆիզիկաքիմիական և միկրոբիոլոգիական լաբորատոր փորձարկումների, ինչպես նաև կատարվել են օրգանոլեպտիկ փորձարկումներ հանձնաժողովի կողմից (11 անդամից բաղկացած): Եղել են հանդիպումներ արտադրող ձեռնարկություններում՝ պարզելու և գնահատելու համար արտադրման պահից մինչև արտադրանքը իրացման կետեր հասնելու ընթացքը: Աշխատանքների և արդյունքների վերջնական եզրակացությունները լուսաբանվել են ռադիո-հեռուստահաղորդումների միջոցով:
- Ասոցիացիան «Երևան» հեռուստաընկերությունում վարում է «Սպառողի իրավունք» հաղորդաշարը:

Ընթացիկ ծրագրեր

- Բնակչության սպառողական գիտակցության բարձրացման նպատակով հրատարակվում են բուկլետներ, թերթիկներ և տարածվում բնակչության շրջանում:
- Պարբերաբար կազմակերպվում են ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ՝

սպառողի գիտակցությունը բարձրացնելու, նրան թարմ տեղեկատվությամբ ապահովելու նպատակով:

- Մշակվում է սպառողների իրավունքների պաշտպանության կրթական ծրագիր և կազմվում են ուսումնական ձեռնարկներ:
- Ստեղծվում է խորհրդատվական ծառայություն:
- Ստեղծվում է իրավաբանական ծառայություն:
- Ապահովվում է սպառողի իրազեկությունը սպառողական շուկայում առաջարկվող արտադրատեսակների մեջ սննդային հավելանյութերի և գենետիկորեն մոդիֆիկացված (GMO) նյութերի կիրառման մասին, որպեսզի սպառողը կարողանա նվազեցնել իր առողջությանը սպառնացող վտանգի աստիճանը, խուսափի սննդային հատկությունները կորցրած սնունդ ընդունելուց:
- Կազմակերպվում են դասախոսություններ և սեմինարներ:
- Կատարելագործվում է ուսումնական-տեղեկատվական կենտրոնում անցկացվող դասընթացների շարքը:

Ապագա ծրագրեր

- Ասոցիացիան մտադիր է Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչության ջանքերով ստեղծել էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրություն, որը օրինակ ծառայի մարզերի գյուղերում համանման ծրագրեր իրականացնելու համար:
- Շուկան էկոլոգիապես ոչ մաքուր գյուղատնտեսական մթերքները գերծ պահելու և հողատիրոջ՝ իբրև ազարակապանի գիտակցությունը բարձրացնելու նպատակով մի շարք համայնքներում անցկացնել դասընթացներ, սեմինարներ և հիմնել խորհրդատվական ծառայություններ:
- Ստեղծել անկախ լաբորատորիա:

«ԳՈՐԾԱՐԱՐ ԿԻՆ»

«Գործարար կին» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1997 թվականին: 1998թ.-ից 16 կանանց հասարակական կազմակերպությունների համանախագահության հիմնադիր անդամ է, «Մարդու իրավունքներ 96» իրավապաշտպան ՀԿ-ների միության անդամ, 2002թ.-ից ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) գեներալային հանձնաժողովի անդամ:

Առաքելությունը

Նպաստել Հայաստանում ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության հաստատմանը, աջակցել հանրապետությունում կնոջ հասարակական դերի, պետական կառավարման և տնտեսական կյանքի բնագավառներում նրա ընդգրկվածության բարձրացմանը և կանանց իրավունքների պաշտպանությանը:

Նպատակները

- նպաստել կանանց հիմնախնդիրների լուծմանը,
- կատարել վերլուծական և գիտական հետազոտություններ, խորհրդատվական բնույթի աշխատանքներ,
- առաջարկություններ ներկայացնել հանրապետության կյանքի կենսական հարցերի վերաբերյալ,
- հետամուտ լինել կնոջ և տղամարդու իրավահավասարությունն ապահովող խնդիրների լուծմանը,
- աջակցել կանանց իրավունքների պաշտպանությանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,
- բարձրացնել կանանց իրավագիտակցությունը:

Գործունեությունը և իրականացրած ծրագրերը

- 1997թ. կազմակերպությունը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացրել է «Կինը և ձեռնարկատիրությունը ՀՀ-ում» սոցիոլոգիական հետազոտությունը:
- 1998-1999թթ. կազմակերպել է կլոր սեղան-քննարկումներ «Կնոջ կարգավիճակը և մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացներին» թեմայով:
- 1998-1999թթ. խորհրդատվական ծայնի իրավունքով մասնակցել է ՀՀ սոցիալական ապահովության նախարարության առընթեր կառավարական գեներալին հանձնաժողովի աշխատանքներին:
- 1999թ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի աջակցությամբ ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության հետ համատեղ կազմակերպել է «Կանայք և ձեռնարկությունը» միջազգային կոնֆերանսը:
- Սոցիալապես անապահով խավերի շրջանում անցկացրել է հետազոտություն՝ պարզելու ընտանեկան նպաստների արդյունավետությունը: Արդյունքները ՉԼՄ-ների մասնակցությամբ անցկացված կլոր սեղանի ընթացքում ներկայացվել են կառավարության ներկայացուցիչներին:
- Մասնակցել է մի շարք միջազգային և տարածաշրջանային սեմինարների՝ հանդես գալով ելույթներով, զեկուցումներով և հրապարակումներով:
- 2000թ. Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ 300 կին ան-

- կանոն միգրանտների շրջանում կատարել է սոցիոլոգիական հետազոտություն:
- Հրատարակել է «Կանանց անկանոն միգրացիայի խնդիրները ՀՀ-ում» գրքույկը, որում ամփոփված են 300 կանանց շրջանում անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Ձեռնդրվել են մաս խորհուրդներ պոստեմցիալ կին միգրատներին: Գրքույկն անվճար բաժանվել է շահառուներին:
- Կառավարությանը, հասարակական և միջազգային կազմակերպություններին ներկայացվել են առաջարկություններ կանանց թրաֆիկինգի և անօրինական փոխադրումների կանխարգելման և կարգավորման վերաբերյալ:
- Անկանոն միգրանտ կանանց տրամադրվել է անվճար հոգեբանական խորհրդատվություն:
- 2001թ. ստեղծվել է Հայաստանի գործարար կանանց տվյալների շտեմարան:
- 2002թ. իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն Հայաստանի գործարար կանանց շրջանում՝ վեր հանելու համար ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող հիմնախնդիրները: Արդյունքները ներկայացվել են շահագրգիռ մարմիններին:
- 2003թ. մասնակցել է «Ընտրությունների օրինականությունը վերահսկող հասարակական հանձնաժողովի» աշխատանքներին: Կազմակերպել է քննարկումներ և կլոր սեղան հանրապետության ակտիվ կանանց մասնակցությամբ:
- 2004-2005թթ. իրականացնում է «Կանայք և նրանց քաղաքական ակտիվության խնդիրները ՀՀ-ում» ծրագիրը:

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԿԱՆԱՆՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Պեկինյան համաժողովի որոշումների կատարման ուղղությամբ Նոյեմբերյանի կանանց տարածաշրջանային ասոցիացիա (ՆԿՏԱ, նախկինում Կանանց հանրապետական խորհրդի Նոյեմբերյանի մասնաճյուղ) հասարակական կազմակերպությունը աշխատանքներ է ծավալում որոշումների կայացման մակարդակում և հասարակական-քաղաքական ոլորտներում կնոջ դերի և ակտիվության բարձրացման, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման ուղղությամբ:

Հատկապես արդյունավետ է աշխատանքը երիտասարդության հետ: Կառույցին կից հիմնադրվել է «Երիտասարդական ֆորում», որը հնարավորություն է տալիս ավագ սերնդի աշխատանքային փորձն ու գիտելիքները համադրելու երիտասարդության ուժի և եռանդի հետ:

2003-2004թթ. Նոյեմբերյան քաղաքում Նոյեմբերյանի կանանց տարածաշրջանային ասոցիացիան ԿՀ –ի աջակցությամբ կազմակերպել է «Նոյեմբերյանի երիտասարդ լիդերների դպրոց» մեկամսյա դասընթացներ, որոնց մասնակցել են 60 տղաներ և աղջիկներ: Ծրագրի շրջանակներում դպրոցի սաներին տրվել է իրավական, քաղաքացիական գիտելիքներ, կազմակերպվել են գործնական պարապմունքներ, հանդիպումներ,

կյոք սեղաններ, էքսկուրսիաներ և այլ միջոցառումներ: Հատկապես հիշարժան են դպրոցի սաների հանդիպումները Նոյեմբերյանի քաղաքապետի և ավագանու հետ:

ՆԿՏԱ-ն Պեկինյան խորհրդաժողովի հանձնարարականների տեսանկյունից ակտիվություն է հանդես բերել հատկապես հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման գործընթացներում:

Քանի որ Նոյեմբերյանի տարածքի շուրջ 9 գյուղ սահմանամերձ է Ադրբեջանին, շարունակական կոնֆլիկտային իրավիճակը խիստ բացասաբար է ազդում երկու կողմերի՝ Հայաստանի և Ադրբեջանի սահմանամերձ բնակավայրերում ապրող կանանց, երեխաների և ծերերի հոգեբանական, տնտեսական ու ֆիզիկական վիճակի վրա:

«Ոչ պատերազմին, մենք խաղաղություն ենք ուզում» կարգախոսով կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ համախմբելով տարածքի կանանց: ՆԿՏԱ-ն լայնածավալ աշխատանք է կատարում համայնքներում. հանդիպումներ, զրույցներ, դասախոսություններ՝ «Հակամարտությունների հաղթահարումը և կանանց դերի բարձրացումը խաղաղասիրական գործընթացներում» թեմայով:

Տարածքի դպրոցներում հանձնարարվել են «Եթե լինեի խաղաղության դեսպան» թեմայով շարադրություններ, որոնց մեջ բոլոր երեխաները խաղաղություն են ցանկացել:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կանայք հանուն հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործող « աղաղության կոալիցիայի» նախաձեռնությամբ 2004թ. Նոյեմբերյանում կազմակերպվել է կյոք սեղան, որտեղ քննարկվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևը: Կյոք սեղանին մասնակցեցին տարածքի սահմանամերձ գյուղերի կանայք, տեղական իշխանությունների, լրատվամիջոցների, ՀԿ-ների ներկայացուցիչներ: Քննարկման արդյունքում մշակվեցին սահմանամերձ գյուղերի կանանց հիմնախնդիրների լուծման առաջարկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ

«Հայաստանի գործարար կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը գրանցվել է 1996թ. և վերագրանցվել 2002թ.: Կազմակերպությունն ունի մասնաճյուղեր, համագործակցում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցում տարբեր սեմինարների, քննարկումների, ակցիաների ու խորհրդաժողովների:

Պեկինյան Գործողությունների ծրագրի ընդունումից հետո ասոցիացիան ծավալել է հետևյալ գործունեությունը:

- 1996թ.կազմակերպվել է առողջարարական հանգիստ ծնողագուրկ, սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների երեխաների համար: Ծրագիրը ֆինանսավորել է « աղաղության կորպուս» կազմակերպությունը:
- 1996թ. կազմակերպվել են փոքր բիզնեսի դասընթացներ գործազուրկ դարձած կա-

նանց համար (ինժեներներ, ուսուցիչներ, երաժիշտներ, մանկապարտեզների դաստիարակչուհիներ): Դասընթացի ավարտին ունկնդիրները ստացել են 50-100 ԱՄՆ դոլարի չափով միկրովարկեր՝ սեփական գործ սկսելու համար: Ծրագրում ընդգրկվել է 25 կին: Ծրագիրը ֆինանսավորել է « աղաղության կորպուս» կազմակերպությունը:

- 1996թ. «Ավանգարդ» իրավապաշտպան կազմակերպության հետ համատեղ անցկացվել են սեմինարներ ընտրություններին մասնակցելու համար կանանց նախապատրաստելու նպատակով: 45 կին ունկնդրել է «Դիտորդի իրավունքներն ու պարտականությունները» սեմինարը:
- 1996-1997թթ. իրականացվել է «Ձեռնարկատիրություն. փոքր և միջին բիզնես վարելու հիմնական սկզբունքները» ծրագիրը: «Եվրագիա» հիմնադրամի կողմից ֆինանսավորված այս ծրագրին մասնակցել է 240 կին:
- 1997-1998թթ. իրականացվել է «Փոքր բիզնեսի զարգացում. մենեջմենթ և մարկետինգ» ծրագիրը, որին մասնակցել են Սպիտակի, Ալավերդու, Տաշիրի, Ստեփանավանի, Ջրաշենի, Վանաձորի 320 կանայք: Ծրագիրը հովանավորել է «Եվրագիա» հիմնադրամը:
- 1997թ. «Եվրագիա» հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է «Բիզնեսի հեռուստուցում» ծրագիրը:
- 1998թ. իրականացվել է «Փոքր բիզնես՝ կանանց ներգրավմամբ, Հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագիրը (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան):
- 1998թ. UMCOR-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվել է «Օգնություն երեխաներին» ծրագիրը:
- 1999թ. Ջինիշյան հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է «Մարդասիրական օգնություն ծերերին և կենսաթոշակառուներին» նախագիծը:
- 1999թ. IESC-ի օժանդակությամբ կազմակերպվել է դասընթաց հոգեբանների համար: Վերաորակավորմանը մասնակցել է 20 կին հոգեբան:
- 1999թ. կազմակերպության ջանքերի շնորհիվ 85 կին անցել է համակարգչային ուսուցում, 15 կին՝ գործավարության:
- 2000թ. Ջինիշյան հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է «Մոցիալ-մարդասիրական օգնություն բազմազավակ ընտանիքներին» ծրագիրը: Օգնություն է ստացել 100 ընտանիք:
- 2000թ. HPI-ի աջակցությամբ իրականացվել է «Գյուղական բիզնեսը և կինը» ծրագիրը:
- 2000թ. Ջինիշյան հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է «Կանանց առողջություն» ծրագիրը, որի շրջանակներում 90 կին ենթարկվել է մամոգրաֆիական հետազոտության:
- 2001-2003թթ. UMCOR-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվել է «Գյուղական համայնքների զարգացում. կինը և գյուղական բիզնեսը» ծրագիրը:
- 2001թ. մարդասիրական օգնություն են ստացել Արցախյան հակամարտության ազատամարտիկների ընտանիքները: 150 ընտանիք ստացել է սնունդ, հագուստ, դեղորայք, հիգիենիկ պարագաներ: Ծրագիրն իրականացվել է Ջինիշյան հիմնադ-

րամի աջակցությամբ:

- 2002թ. «Եվրագիա» հիմնադրամի աջակցությամբ, էլեկտրոնային առևտուրը զարգացնելու նպատակով, իրականացվել է «Վիրտուալ բիզնես կենտրոն Հարավային Կովկասում» ծրագիրը, որի արդյունքում ստեղծվել է ինտերնետային ցանց:
- 2002թ. ծրագիր է իրականացվել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի համագործակցությամբ, որի շնորհիվ կանայք նախապատրաստվել են ընտրություններին, մասնակցել ընտրություններին և ավագանիների աշխատանքներին: Ծրագիրը հովանավորել է «Եվրագիա» հիմնադրամը:
- 2000-2004թթ. գործել է «Երիտասարդ լրագրողների և իրավապաշտպանների դպրոցը», որը ֆինանսավորել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF): Քաղաքացիական կրթություն են ստացել 380 երիտասարդներ:

«ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

«Համագործակցություն» կանանց հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ԱՊՀ երկրների Կանանց ասամբլեայի, Հայ կանանց միջազգային միության և ՀՀ ԱԺ ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի անդամ:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում իրականացրել է հետևյալ ծրագրերը:

- «Եվրագիա» հիմնադրամի» հովանավորությամբ հանրապետությունում առաջին անգամ անցկացվեց կոնֆերանս՝ նվիրված Հայաստանի ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներին: Այնուհետև, այդ կոնֆերանսի արդյունքների հիման վրա ստեղծվեց Ազգերի միություն:
- Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանում, ինչպես նաև մյուս անկախացած հանրապետություններում, բազմաթիվ գործարաններ և միութենական կազմակերպություններ դադարեցրին իրենց գործունեությունը: Դրա հետևանքով կանանց 70%-ը զրկվեց աշխատանքից: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ կազմակերպությունը հետագոտեց մոտ 10 000 կանանց ճակատագրեր, որոնց մի մասի համար կազմակերպվեցին սեմինարներ՝ փոխակերպված հասարակության պայմաններում նրանց ինտեգրմանը նպաստելու համար: Մոտ 200 կին սկսեց զբաղվել փոքր և միջին բիզնեսով:
- Հայաստանի շրջաններում կազմակերպվել են նախընտրական արշավներ, որոնց նպատակն էր ակտիվացնել կանանց մասնակցությունը ընտրություններին:
- Կանանց և մայրության ու զեղեցկության տոների կապակցությամբ ձեռնարկվել են անհատական ցուցահանդեսներ և գրքերի շնորհանդեսներ (նկարչուհիներ Սեդա Բեքարյանի, Մարինա Վարդանյանի, Նարա Հարությունյանի և արձակագիր Ռուզաննա Ասատրյանի):
- Ֆրանսիայի հայ համայնքի աջակցությամբ դպրոցականների հետ համատեղ

պարբերաբար կազմակերպվում են համերգներ և բարեգործական միջոցառումներ Նորքի տուն-ինտերնատի 40 ծերերի համար:

- Երեխաների իրավունքների պաշտպանության օրը՝ հունիսի 1-ին, Երևան քաղաքի մանկա-պատանեկան գեղագիտական կենտրոնում մոտ 150 երեխաների նվերներ են բաժանվել:
- Երևանի թիվ 118 դպրոցի 1-3-րդ դասարանների մոտ 250 աշակերտների հանդիսավոր կերպով նվերներ են տրվել:
- Մեպտեմբերի 1-ի կապակցությամբ նվերներ են բաժանվել Երևանի Աճառյանի անվան դպրոցի առաջին դասարանցիներին:
- Ծապունիայի սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցության շնորհիվ Երևանի Աջափնյակ համայնքի և Գյումրի քաղաքի անապահով ընտանիքների 12-16 տարեկան 160 երեխաների համար Ծաղկաձորի «Մոր և մանկան» հանգստյան տանը կազմակերպվել է ամառային հանգիստ:
- Կազմակերպությունը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ մասնակցել է Կանանց վիճակի բարելավման և նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի (2004-2010թթ.) մշակման աշխատանքներին:
- Կազմակերպությունը՝ որպես գենդերային հիմնահարցերի համակարգող, մասնակցել է Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների EXPO-2004 ցուցահանդեսին, որը կազմակերպվել էր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և AED-ի կողմից:
- Կազմակերպությունը մասնակցել է մի շարք սեմինարների ու կոնֆերանսների և սերտ կապեր հաստատել տարբեր երկրների կանանց ՀԿ-ների հետ (Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ուզբեկստանի, Տաջիկիստանի, Ղազախստանի, Վրաստանի, Ադրբեջանի և այլն):

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպությունը համագործակցում է ՀՀ կառավարության, Գեղարքունիքի մարզպետարանի, Մարտունու քաղաքապետարանի, Մարտունու ՄՃՏԿ-ի, Մարտունու «Ջանգակ», Գավառի «Զյավառ», Սևանի «Սևան 1 TV» հեռուստաընկերությունների, «Եվրագիա» հիմնադրամի, Ջինիշյան հիմնադրամի, ԱՄՆ ՄՁԳ-ի, ՀԿ-ների ուսուցման կենտրոնի, ԱՄՆ Տեղեկատվական ծառայության, «Համաշխարհային ուսուցում», IREX կազմակերպությունների, ՄԱԿ-ի ՊՀԾ-ի և տեղական հասարակական կազմակերպությունների հետ:

Առաքելությունը

Նպաստել տարածաշրջանի ընտանիք կերակրող, ծնողազուրկ, անժառանգ ծեր,

լքված թոշակառու, հաշմանդամ մայր, գործազուրկ և բռնության ենթարկված կանանց սոցիալական, առողջապահական, իրավական պաշտպանության խնդիրների լուծմանը ուսուցման, մարդասիրական օգնության, քարոզչության, խորհրդատվության, տնային խնամքի և ժամանակավոր կացարանի տրամադրման միջոցով:

Իրականացրած ծրագրերը

- 2001թ.-Իրավաբանական օգնություն Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածքի ընտանիք կերակրող կանանց ի Հայաստանի դատախազական ու տնտեսական օրենսդրության բարեփոխումների պայմաններում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ ՄՁԳ-ի և դեսպանատան աջակցությամբ:
- 2001թ. UNHOR-ի և ԱԱՀ ՀԿ-ի հետ համատեղ «Բավարար առողջությունը և իրազեկությունը՝ առողջ հասարակարգի նախապայման» ծրագրի շրջանակներում ապահովվել են Մարտունի քաղաքի Չ. Անդրանիկ թաղամասում գործող բուժկետի աշխատանքները:
- 2002թ. իրականացվել է «Օրենքը և հասարակությունը ընդդեմ կենցաղային բռնությունների» ծրագիրը, որը հովանավորել են ԱՄՆ ՄՁԳ-ն և «Համաշխարային ուսուցում» կազմակերպությունը:
- 2002-2003թթ. իրականացվել է «Համայնքային փոխօգնությունը՝ մարդասիրության երաշխիք» ծրագիրը, որի արդյունքում Մարտունի քաղաքում բացվել է համայնքային փոխօգնության կենտրոն:
- 2002-2005թթ. ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորված «Կենցաղային բռնության ենթարկվածներին՝ ապահով և անվտանգ օթևան» ծրագրի իրականացման արդյունքում Մարտունի քաղաքում գործում է կանանց վերականգնողական կենտրոն:
- 2004թ. ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային կազմակերպության աջակցությամբ իրականացվել է «Իրազեկությունը՝ ինքնապաշտպանության երաշխիք» ծրագիրը:
- 2004-2005թթ. իրականացվել է «Կարիքավորին օգնելը մարդասիրություն է»: Արդյունքում Մարտունի քաղաքում գործում է տարեցների ցերեկային կենտրոն:
- 2004-2005թթ. «Եվրագիա» հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է «Համայնքային կենտրոնի կարողությունների զարգացում՝ համայնքի զարգացման նախապայման» ծրագիրը: Մարտունի քաղաքում գործում է համայնքային փոխօգնության կենտրոն:

«ՔԱՐԱՎԱՆ-88»

Առաքելությունը

«Քարավան-88» բարեգործական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 1997թ., ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել 1998թ.: Կազ-

մակերպությունը ձգտում է օգնել փախստականների, զոհված և հաշմանդամ ազատամարտիկների, սոցիալապես անապահով ընտանիքներին, նպաստել հայոց պետականության հզորացմանը, քաղաքացիների բարօրությանը և մասնագիտական որակավորմանը, կազմակերպել ճամբարներ, մշակութային միջոցառումներ, իրականացնել համայնքների զարգացման ծրագրեր՝ ստեղծելով աշխատատեղեր:

Իրականացված ծրագրեր

- Իրականացվել են հետազոտական աշխատանքներ Կարմիրի, Աբովյանի, Սիսիանի, Ղափանի, Ամասիայի, Վարդենիսի շրջաններում, կատարվել են սոցիոլոգիական հարցումներ, վեր են հանվել մի շարք հիմնախնդիրներ:
- Կազմակերպության կողմից կանխվել են Երևան քաղաքում ժամանակավոր կացարաններ ստացած փախստականների նկատմամբ մի շարք ոտնձգություններ:
- 1999-2003թթ. կազմակերպության և Նյու Յորքի «Արձագանք» ծրագրի տնօրենի համագործակցության ու ամերիկահայ բարերար Հրանտ Ջանդանի ֆինանսավորման շնորհիվ 16 անապահով ընտանիքներ ամսական 20 ԱՄՆ դոլար նպաստ են ստացել:
- 1998թ. կազմակերպության ջանքերով ստեղծվել է «Էմանուել» պարային խումբը՝ կազմված անապահով ընտանիքների 2-14 տարեկան երեխաներից, որը իր բարեգործական համերգներով և բարձր մրցանակներով ճանաչված է թե՛ հանրապետությունում, թե՛ նրա սահմաններից դուրս:
- 1999-2003թթ. ԱԴԲԱ, ՀՕՖ, ԱՄԶՈՐ, IRD, «Քաունթերփարթ» կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել են մարդասիրական օգնության ծրագրեր: ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Սնունդ աշխատանքի դիմաց» նախագծի շրջանակներում 1999թ. Կարմիրի շրջանի Դպրաբակ գյուղում և 2000թ. նույն շրջանի Ձորավանք գյուղում իրականացվել է խմելու ջրատարի վերանորոգում:
- ԱՄՆ ՄՁԳ-ի Հայաստանում դատաիրավական և տնտեսական օրենսդրության բարեփոխումների ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի և Տավուշի մարզերում իրականացվել է անվճար իրավաբանական խորհրդատվության ծրագիր:
- «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության դրամաշնորհով «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» և «Հայկական աշխարհագրական ընկերություն» կազմակերպությունների հետ համատեղ 2001-2002 թթ. իրականացվել է «Հրազդանի կիրճի էկոլոգիական իրադրության գնահատում և բարելավման առաջնահերթ միջոցառումներ» ծրագիրը:
- 2002-2004թթ. իրականացվել է «Համակարգչային ուսուցում. աշխատատեղերի նոր հնարավորությունների խթանում» անվճար ուսուցման ծրագիրը, որը ֆինանսավորվել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան կլոր սեղանի կողմից:
- 2003-2004թթ. «Ձուրը կենսական պահանջ» խմելու ջրատարի կառուցման ծրագիրը Գեղարքունիքի մարզի Ձորավանք գյուղում, ֆինանսավորումը՝ CRS և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան կլոր սեղանի կողմից:

«ՇՈՂԵՐ» ՄԻՈՒԹՅՈՒՆ

«Շողեր» միությունն իր գործունեությունն սկսել է 1995թ.: Արդարադատության նախարարությունում գրանցվել է 1997թ., վերագրանցվել 2000թ.: Այն իր կազմում ընդգրկում է 150 անդամներ և կամավորներ: Միությունը Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի, WomenAid International–Caucasus համակարգող կոմիտեի, ՀԿ/UNICEF տարածաշրջանային ցանցի, UNIFEM ցանցի, CENN, REC–Caucasus, «Կանանց ՀԿ» անկախ համաժողովի, Երևան քաղաքի բնապահպանական հասարակական դաշինքի անդամ է:

Առաքելությունը

Մեմբերների, միջոցառումների, դասընթացների, գեներային հետազոտությունների միջոցով նպաստել քաղաքացիական հասարակության ձևավորմանը, կանանց և երեխաների վիճակի բարելավմանը, կանանց դերի բարձրացմանը կրթության, իրավունքների, մշակույթի, սոցիալ-տնտեսական և բնապահպանության ոլորտներում:

Իրականացված ծրագրերը

Լոռու, Վայոց ձորի, Տավուշի, Սյունիքի մարզերում

- 1995-2004թթ. իրականացվել են մարդասիրական, կրթական, բնապահպանական, հանրային քարոզչության ծրագրեր դպրոցներում և տեղական համայնքներում:
- 1995-2000թթ.՝ մարդասիրական, կրթական, հոգեբանական վերականգնողական ծրագրեր Շիրակամուտ (նախկին Նալբանդ) գյուղում:
- 1998-1999թթ. իրականացվել են «Շրջակա միջավայրի պաշտպանության օրը Շիրակամուտում» և «Պահպանենք բնությունը ապագայի համար» միջոցառումները TACIS-ի «Բնակչության բնապահպանական իրազեկության բարձրացման» ծրագրի շրջանակներում:
- 1999թ. սեպտեմբերին Վանաձոր, Ստեփանավան քաղաքներում ծավալվել է քարոզչություն՝ բնակչության բնապահպանական գիտակցության բարձրացման թեմայով:
- 2000թ. իրականացվել է «Աղետի գոտու գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հետազոտություններ» ծրագիրը, մարդասիրական օգնություն է բաշխվել կարիքավոր ընտանիքներին:
- 2003-2004թթ.՝ Տավուշի մարզի Գանձաքար, Ծաղկավան, Բարեկամավան գյուղերի տվյալների շտեմարանի ստեղծում, մարդասիրական օգնություն:
- 2003թ. Լոռու մարզի Ալավերդի քաղաքում իրականացվել է «Առողջ սերունդ» կրթական ծրագիրը դեռահասների համար:
- 2004թ. մայիսին Վայոց ձորի ութ գյուղական համայնքներում իրականացվել է «Մասնակցային մոնիտորինգ և համայնքի կարողությունների հզորացում» ուղղված

աղքատության հաղթահարմանը» ծրագիրը:

- 2004թ. հոկտեմբերին Տավուշի մարզի Բարեկամական գյուղի դպրոցի աշակերտներին և ուսուցչական կոլեկտիվին բաժանվել են դպրոցական պարագաներ, իսկ գյուղի անապահով ընտանիքներին՝ հագուստ:
- 2004թ. նոյեմբերին «Վորլդ Վիժն» կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի կողմից տրամադրված գրականությամբ, դիդակտիկ և այլ ուսուցողական նյութերով համալրվել են «Շողեր» միության Մեղրու հենակետի, Մեղրի քաղաքի և Շվանիձոր գյուղի միջնակարգ դպրոցների գրադարանները:

Երևանում

- 1997-2004թթ. ԱՄԶՈՐ, «Քաունթրփարթ Ինթերնեյշնլ», «Սիջազգային օգնություն և զարգացում» և «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպությունների, Հայաստանի մանկական ասոցիացիայի, ՀՀ սոցալ նախարարության, Հայաստանի Կարմիր խաչի ընկերության, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի, «Մոնթե Մելքոնյան» հիմնադրամի և անհատ բարերարների աջակցությամբ կազմակերպվել է մարդասիրական օգնության բաշխում:
- 1997, 2000, 2002թթ. ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի համագործակցությամբ, «Մնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի շրջանակներում իրականացվել են «Հայկական մրգերի մշակում» և «Գյուղմթերքի պահածոյացում» նախագծերը:
- 1998-99թթ. իրականացվել են կանանց զբաղվածության հետազոտություններ:
- 2001թ. դեկտեմբերին կազմակերպվել է «Կանանց իրավունքներ, գենդերային հիմնախնդիրներ» թեմայով կլոր սեղան:
- 2002թ փետրվար-մայիս ժամանակահատվածում Մայրության ֆոնդի և «Սեկնություն» հոգեբանական հետազոտությունների կենտրոնի համագործակցությամբ կազմակերպվել են հոգեբանական վերականգնողական դասընթացներ:
- 2002-2004թթ. իրականացվել են կրթական, ճանաչողական, քարոզչական բնապահպանական ծրագրեր, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ակցիաներ բնակչության և երեխաների շրջանում:
- 2002թ. սեպտեմբերին «Բարի կամք, բարի գործ, բարի ելք» միջմարզային կամավորական շարժման շրջանակներում իրականացվել է բնապահպանական և բարեգործական ծրագրերի շարք:
- 2002թ դեկտեմբերին «Գենդերային բռնության դեմ ակտիվության 16-օրյակ, Կովկաս» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Մարդու իրավունքներ, գենդերային հիմնախնդիրներ» կլոր սեղանը:
- 2003թ. հունիսից «ՀՀ ՀԿ-ներ և UNICEF» ազգային ցանցի համագործակցությամբ իրականացվել է «Ուշադրություն յուրաքանչյուր երեխայի» ակցիան:
- 2003թ. հոկտեմբերին «Բարի կամք, բարի գործ, բարի ելք» միջմարզային կամավորական շարժման շրջանակներում կազմակերպվել են առողջապահական դասընթացներ դեռահասների համար, մշակութային միջոցառումներ՝ դպրոցներում և մանկապարտեզներում, մարդասիրական օգնություն՝ անապահով խավերին:
- 2003թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել են «Առողջ ապրելակերպ

դեռահասների համար» սեմինարներ և կլոր սեղան:

- 2004թ. կազմակերպությունը մասնակցել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) իրականացման բանակցային գործընթացներին մարդու իրավունքների ոլորտի աշխատանքային խմբում, 2004թ. օգոստոսից-հոկտեմբեր՝ ԱՀՌԾ-ի իրականացման գործընկերության համաձայնագրի մշակման աշխատանքներին:
- 2004թ փետրվարից նախաձեռնվել են Երևան քաղաքի բնապահպանական հիմնախնդիրներին, կանաչ տարածքների պահպանմանն ուղղված միջոցառումներ և ակցիաներ:
- 2004թ. հունիսից IREX-ի համագործակցությամբ, «Ինտերնետի մատչելիության և ուսուցման ծրագրի» (IATP) շրջանակներում կազմակերպվել են համակարգչային դասընթացներ: Արդյունքում պատրաստվել է կազմակերպության վեբկայքը:
- 2004թ. հոկտեմբերին «Բարի կամք, բարի գործ, բարի ելք» միջմարզային կամավորական շարժման ակցիայի շրջանակներում կազմակերպվել են դպրոցականների և կազմակերպության անդամների այցելություն Հայաստանի երկրաբանական թանգարան, մարդասիրական օգնության բաշխում անապահով ընտանիքներին, այցելություններ փախստականներին և բռնագաղթածներին:
- 2004թ. հոկտեմբերին մասնակցել է «ՀԿ-ների համաժողով և ցուցահանդես 2004»-ին, եղել է համաժողովի և ցուցահանդեսի Երևանի սոցիալական ոլորտի մասնակից ՀԿ-ների համակարգող: Արդյունքում սոցիալական հիմնահարցերի ոլորտը արժանացել է «Ոլորտի լավագույն ներկայացում» 1-ին մրցանակին:
- 2004թ. հունիսին կազմակերպել է այցելություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Կենդանաբանության թանգարան:

ՄՊԻՏԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ «ՇՈՂԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մպիտակի «Շողեր» մանկապատանեկան կենտրոնը հիմնադրվել է 1990թ., վերագրանցվել՝ 2002թ.:

Նպատակը

Աջակցություն ցույց տալ Մպիտակի երեխաներին և երիտասարդությանը, նպաստել հետերկրաշարժային շրջանի բարոյահոգեբանական վերականգնողական, կրթա-դաստիարակչական, առողջապահական, սոցիալական հիմնախնդիրների լուծմանը, մարդու պաշտպանությանը, մասնակցել կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության օրենսդրական դաշտի կատարելագործման և միջազգայնացման գործընթացին:

Գործունեության ոլորտը

Ուսումնա-դաստիարակչական, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, կադրերի վերամասնագիտացման, երեխաների արտադասարանային և նախակրթական զարգացման, ֆիզիկական և հոգեբանական վերականգնման, սոցիալական աջակցության, շահերի պաշտպանության և իրավական օգնության:

Գործող ենթակառույցներ

- Նախավարժարան – «Արտուտիկ» նախակրթական ծրագիր փախստականների ընտանիքների երեխաների համար,
- Համակարգչային դպրոց-լաբորատորիա և ինտերնետային ծառայության կենտրոն:
- Կիրառական արվեստի դպրոց –«Հակինթ» ստուդիա, նկարչության, անիմացիայի, պատանի ժուռնալիստների ստուդիաներ;
- «Սպիտուքս» մանկապատանեկան թերթ (ամենամսյա),
- Տիկնիկային թատրոն,
- Կիրառական արվեստի արտադրամաս հաշմանդամ կանանց համար. գորգագործություն, կար ու ձև, խեցեգործություն և այլն:

Իրականացվող ծրագրեր, միջոցառումներ

- Փախստականների համայնքի կանանց և երեխաների զարգացման ուսումնական և վերամասնագիտացման ծրագրեր:
- Երեխաների իրավունքների պաշտպանության ուսումնա-դաստիարակչական ծրագրեր Սպիտակի միջնակարգ դպրոցներում:
- Բնապահպանական տարածաշրջանային ուսումնական ծրագրեր (Վրաստանի և Հայաստանի դպրոցականների հետ համատեղ):
- Հաշմանդամների ընտանիքների սոցիալիզացման ծրագրեր. մարդասիրական օգնություն, անվճար համակարգչային ուսուցում, ձեռքի աշխատանք:
- Համակարգչային տեխնիկայի տրամադրում տարածքի գյուղական դպրոցներին և ամբուլատորիաներին (Մեծ Պարնի, Ջրաշեն, Արևաշող, Սարամեջ և այլն, 30 միավոր):
- Համատեղ աշխատանք Սպիտակի ՆԳ անչափահասների բաժնի հետ:
- Ամենամսյա ամառային միջազգային ուսանողական ճամբար. « աղադրության դպրոց» Սպիտակի երեխաների համար ինտերնացիոնալ ուսանողական ջոկատների մասնակցությամբ:
- Կազմակերպության կողմից մշակվել է Սպիտակի Իտալական թաղամասի Համայնքային զարգացման կենտրոնի ճարտարապետական նախագիծ-առաջարկը, որը կարող է օրինակելի դառնալ Ադետի գոտու համայնքների համար:

«ՁԻՆՎՈՐԻ ՄԱՅՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հայաստանի «Ձինվորի մայր» հասարակական կազմակերպությունը քարոզչական, լուսավորչական, խորհրդատվական, հրատարակչական և հետազոտական միջոցներով Հայաստանի Հանրապետության տարածքում բարոյահոգեբանական, սոցիալական և իրավական օգնություն է ցույց տալիս զինժառանգներին և նրանց ընտանիքներին:

«Ձինվորի մայր» հասարակական կազմակերպությունն իր բազմաբնույթ և բազմազան գործունեության շուրջ 15 տարիների ընթացքում աջակցել է Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացմանը՝ անմիջական մասնակցություն ունենալով բանակի ձևավորման և կայունացման գործընթացին և պայքարելով ազգային բանակում տեղ գտած բացասական երևույթների դեմ:

Կազմակերպությունը կայացավ և ամրապնդվեց այն օրերին, երբ նախաձեռնող խմբի կողմն արձագանքած բազմաթիվ կանայք՝ որպես հիվանդապահներ, Երևանի 16 հիվանդանոցներում խնամեցին վիրավոր զինվորներին: Այդ ժամանակից կազմակերպության շարքերն անընդհատ համալրվում են համախոհներով, որոնք իրենց ուժն ու եռանդը ուղղում են կազմակերպության խնդիրների լուծմանը:

Անցած տարիների ընթացքում կազմակերպությունն իրագործել է ավելի քան 30 խոշոր ծրագրեր, որոնք ուղղված են եղել զինակոչիկների և նրանց ծնողների իրավական կրթությանը, բնակչության իրազեկմանը օրենքների փոփոխությունների վերաբերյալ, պետական կառույցների աշխատանքների թափանցիկությանը: Կազմակերպությունը տպագրել է մի շարք գրքեր և ձեռնարկներ, որոնք օգնել են բնակչությանը, բարձրացրել նրանց իրազեկությունը և նպաստել նրանց մասնակցությանը որոշումների կայացման գործընթացներին:

Որդեկորույս շատ մայրեր աջակցություն են գտել կազմակերպությունում: Այստեղ ստեղծվել և մշտապես գործում է հոգեբանական վերականգնողական կենտրոն գոհված ազատամարտիկների մայրերի համար: Այդ կենտրոնի շնորհիվ կյանքի նկատմամբ հետաքրքրությունը կորցրած բազմաթիվ մայրեր վերադարձել են ակտիվ կյանքի: Կազմակերպությանն առընթեր գործել է նաև բժշկական ախտորոշման կենտրոնը, որտեղ զինվորների ծնողները ստանում էին անվճար խորհրդատվություն և բուժօգնություն:

Կազմակերպությունը որոշակի աշխատանք է կատարում հասարակության մեջ խաղաղասիրություն և հանդուրժողականություն սերմանելու գործում: Այսպես, 1992 թվականի խստաշունչ ճնշմանը կազմակերպությունը 209 որբ երեխաների տարավ Իրան՝ փրկելով նրանց ցրտից և սովից: Նույն ժամանակահատվածում Իրանում կազմակերպված ցուցահանդես-վաճառքից ստացված ողջ հասույթը կազմակերպությունը անմնացորդ փոխանցեց Բոսնիայի և Հերցեգովինայի որբ երեխաներին:

«Մայրերն ընդդեմ բռնության» միջազգային կոնֆերանսը, որը կազմակերպել էր «Ձինվորի մայր» կազմակերպությունը, նշանակալից երևույթ դարձավ Հայաստանի հասարակական կյանքում. առաջին անգամ դեկավարների շրջանում լսելի դարձավ մայրերի ձայնը:

Կազմակերպության խաղաղասիրական գործունեությունը վաղուց ի վեր դուրս է

եկել երկրի սահմաններից: Վերջին երկու տարիների ընթացքում կազմակերպությունը Վրաստանի և Ադրբեջանի ՀԿ-ների հետ միասին իրագործել է մի շարք տարածաշրջանային ծրագրեր: « աղադասիրության դասեր` լիդերների դպրոց» ծրագրի շրջանակներում Հարավային Կովկասի երեք երկրներում տեղի փախստականների համար կազմակերպվել է թրենինգ և միասնական հանդիպում Թբիլիսիում:

Շարունակվում է «Հույսի փոստ» ծրագիրը, որն իրականացվում է Ադրբեջանի գործընկերների հետ: Ծրագրի նպատակն է հասարակական կազմակերպությունների ջանքերով վերահաստատել Արցախյան պատերազմից հետո կորցրած կապերը, օգնել փախստականներին` գտնելու իրենց վաղեմի բարեկամներին, հարևաններին, ծանոթներին: Փոստը աշխատում է մեծ ծանրաբեռնվածությամբ: Ծրագրի մեջ են ներգրավվել նաև այն մարդիկ, ովքեր այժմ գտնվում են Հայաստանի և Ադրբեջանի սահմաններից դուրս, սակայն ուզում են գտնել իրենց ընկերներին կամ լուր ստանալ նրանց մասին: Նամակներ են գալիս Գերմանիայից, Իսրայելից, ԱՄՆ-ից և այլ երկրներից:

Ուշադրության կենտրոնում են հատկապես շահառուների իրավական խնդիրները: Երկարատև հետազոտություններից հետո կազմակերպությունը հանգել է այն եզրակացության, որ ինչպես զինվորականները, այնպես էլ նրանց ծնողները, իրավական կրթության կարիք ունեն: Այս հիմնադրույթը դարձել է կազմակերպության նոր ուղղություններից մեկը:

Այսպես, կազմակերպության կողմից 1998թ. տպագրված «Մեր որդին և ազգային բանակը» գիրքը, որը նպատակ ուներ զինակոչիկներին և նրանց ծնողներին մատչելի ձևով ծանոթացնել զինվորական օրենսդրությանը, բացատրել օրենքների կիրառումն ու զինակոչիկի իրավունքների պաշտպանության մեխանիզմները, մեծ հավանության արժանացավ հայ հասարակության կողմից: Այդ գրքում առաջին անգամ հրապարակված հիվանդությունների ցանկը մեծագույնս նպաստեց հիվանդ երիտասարդների իրավունքների պաշտպանությանը: Գիրքը չորս անգամ վերահրատարակվել է` ամեն անգամ ներառելով զինվորական օրենսդրությունում կատարված փոփոխություններն ու լրացումները: Լույս է տեսել գրքի ռուսերեն թարգմանությունը, պատրաստվում է գրքի նոր վերահրատարակությունը, որը կընդգրկի զինվորական օրենսդրության մեջ տեղի ունեցած բոլոր փոփոխությունները` ներառյալ «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը:

2000-2002թթ. ընթացքում կազմակերպությունը հրատարակել է երեք գիրք:

- «Բարի ծառայություն» գրքանի գրքույկը նախատեսված է զինվորների համար, որը բովանդակում է զինվորի իրավունքները և պարտականությունները` ըստ գործող օրենքների:
- «Հզորանում ենք միասին» դայջեստը նվիրված է կազմակերպության անցած 15-ամյա ճանապարհին: Գրքում մեկտեղված են հայկական մամուլում հրապարակված նյութերը կազմակերպության գործունեության մասին, ինչպես նաև զինվորների ծնողների առավել արդիական դիմում-բողոքները:
- «Ճանաչիր զխրատ...» մեթոդական ձեռնարկը նախատեսված է ուժային կառույցների սպաների ուսուցման համար: Ձեռնարկում զետեղված են այն միջազգային և ազգային օրենսդրական փաստաթղթերը և դրանց պարզաբանումները, որոնք վավերացված և ընդունված են ՀՀ Ազգային ժողովի և կառավարության կողմից: Ներ-

կայացված են նյութեր, որոնք սերտ առնչություն ունեն արդի աշխարհի ռազմական հիմնահարցերի հետ, կարող են նպաստել հրամանատարական կազմի իրազեկությանը աշխարհում կատարվող փոփոխությունների մասին և օժանդակ ուսումնական նյութ ծառայել հրամանատարական կազմի ուսուցման գործընթացում: Գիրքը ընդգրկել է նաև հայոց պատմության հերոսական էջերի համառոտ տեսությունը:

Երկար տարիների ընթացքում ուսումնասիրելով օրենսդրական դաշտի անկատարության պատճառով ծագող խնդիրները՝ կազմակերպությունը ձեռնամուխ է եղել մի շարք ծավալուն քարոզչական ծրագրերի, որոնց արդյունքում փոփոխություններ են տեղի ունեցել զինվորական օրենսդրական փաստաթղթերում, մասնավոր լրացումներ են արվել օրենքների հոդվածներում:

Վերջին տարիներին Ազգային բանակի գորակոչի գործընթացում տեղի ունեցած դրական փոփոխությունների հետ մեկտեղ առանձնացել են այնպիսի ոլորտներ, որտեղ իրավական դաշտի անկատարության, համապատասխան օրենքի, կանոնակարգի բացակայության հետևանքով հաճախ խախտվում են գորակոչիկների իրավունքները: Այդպիսի ոլորտներից է գորակոչիկների առողջության առաջնային պահպանման ծառայությունը:

Բազմաթիվ ծրագրերի իրականացման ընթացքում կազմակերպության արխիվում հավաքվել է տվյալների հարուստ շտեմարան, որն իր հերթին նոր նախաձեռնությունների մեկնակետ է դառնում: Այսպես, այդ շտեմարանում մեծ թվով դիմում-բողոքներ են կուտակվել, որոնց հեղինակները զինվորական հանցագործությունների համար դատապարտված զինծառայողների ծնողներն են: Նրանց կարծիքով, իրենց որդիները անարդար են դատապարտվել, քանի որ խախտել են օրենքը՝ չիմանալով այն: Նյութական հնարավորություններ չունենալու պատճառով քննության ընթացքում ծնողները չեն կարողանում դատապաշտպան վարձել՝ պաշտպանելու իրենց որդու շահերը: Ծատ հաճախ նրանք չեն պատկերացնում՝ ինչի համար է դատապարտվել իրենց որդին, ինչ օբյեկտիվ հանգամանքներ կարող են մեղմացնել պատիժը, ինչպես պետք է կառուցվի պաշտպանությունը, ինչ տարբերակներ է առաջարկում օրենքը և այլն:

Սկսած 1994 թվականից՝ կազմակերպությանը կից գործում է նախապատրաստական ֆակուլտետ, որտեղ զոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաները պատրաստվում են բուհ ընդունվելու համար: Երեխաներն այստեղ կրթություն են ստանում անվճար: Ուսումնական գործընթացին մասնակցում են Հայաստանի տարբեր բուհերի բարձր որակավորում ունեցող դասախոսներ: Տասը տարիների ընթացքում ֆակուլտետում պատրաստվել է 393 երեխա, որոնցից 248-ն ընդունվել է բուհ: Տարեցտարի մեծանում է ֆակուլտետի հեղինակությունը, ավելանում են նաև սովորել ցանկացողները, մասնավոր շրջաններից: 2003/2004 ուսումնական տարում ֆակուլտետն ավարտած 41 ուսանողներից 29 հոգի դարձել է բուհի ուսանող:

Ազգային բանակն իր կայացման ճանապարհին հաղթահարել է բազմաթիվ դժվարություններ: Այսօր բանակում մթերքի և հագուստի խնդիր չկա, սակայն կան դեռևս մի շարք չլուծված հիմնահարցեր, մասնավորապես մարդու իրավունքների պաշտպանու-

թյան ոլորտում, որոնք պահանջում են հասարակության ուշադրությունն ու միջամտությունը:

Վերջին տարիներին հայ հասարակությունը անհանգստացած է բանակում տեղի ունեցող ինքնասպանություններով: Ուսումնասիրությունների մասնակիցները համոզված են, որ այդ երևույթի արմատները հասարակության մեջ են, որտեղից և թափանցում են բանակ: Կազմակերպության՝ ծնողների բողոքների հետքերով կատարած ուսումնասիրությունները երբեմն հանգեցնում են այն եզրակացության, որ ինքնասպանության տակ քողարկվում է հանցագործություն՝ սպանություն:

Հայ հասարակության համար ևս մեկ կարևոր հարց էր «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի ընդունումը: «Ձինվորի մայր» կազմակերպությունն իր անմիջական մասնակցությունը բերեց այս գործընթացին: Կազմակերպվեցին բազմաթիվ հանդիպումներ շահառուների, օրենսդիր և գործադիր մարմինների, զինվորական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ: 2003թ. սեպտեմբերին կազմակերպությունը հրավիրեց միջազգային կոնֆերանս, որին մասնակցեցին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, զինվորական և պետական մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներ և Եվրոպական երկրներից հրավիրված փորձագետներ: Մասնակիցները, համաձայն կոնֆերանսի առջև դրված խնդիրների, հանգամանորեն քննարկեցին այլընտրանքային ծառայության հետ կապված բոլոր խնդիրները: Հյուրերը ներկայացրեցին իրենց երկրների փորձը: Կազմակերպության ջանքերով կոնֆերանսի նյութերը տպագրվեցին «Ձինվորական ծառայություն՝ այլընտրանքային մոտեցումներ» գրքում, որը բաժանվեց մասնակիցներին և ներկայացվեց ՀՀ Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովի քննարկմանը: Կազմակերպության հետագա ջանքերը հանգեցրին նրան, որ Ազգային ժողովում կազմակերպվեցին խորհրդարանական լսումներ խնդրո հարցի վերաբերյալ, 2003 թվականի հոկտեմբերին հրավիրվեց փորձագետների սեմինար, որտեղ իր ակտիվ մասնակցությունն ունեցավ «Ձինվորի մայր» կազմակերպությունը: Այս համատեղ աշխատանքի արդյունքում «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին արմատական փոփոխություններ, և այն առավել մոտեցավ Եվրախորհրդի պահանջներին:

Տասնհինգամյա գործունեության ընթացքում կազմակերպության կողմից կատարվել են բազմաթիվ ծրագրեր, որոնցից առավել նշանակալից են՝ «Միգրացիայի կասեցումն ի նպաստ Հայրենիքի պաշտպանության», «Իրավական կրթություն զինվորների մայրերին», «Օրենքի գերակայությունը զինվորական ոլորտում», «Ձուլված և վիրավոր ազատամարտիկների երեխաների նախապատրաստական ֆակուլտետ», «ՀԿ-ների հզորացում», «Օրենքը լավն է, երբ գործում է», «Փախստականների իրավական կրթություն», «Ժողովրդավարությունը գործողության մեջ», « աղաղասիրության դասեր. լիդերների դպրոց» (տարածաշրջանային), «Հույսի փոստ» (տարածաշրջանային), «Բնակչության տեղեկատվությունը նոր տեխնոլոգիաների միջոցով» և այլն:

Կազմակերպությունը պարբերաբար հրատարակել է «Արահետ» և «Միասին» տեղեկատվական թերթիկները:

Կազմակերպությունն ունի մասնաճյուղեր Գյումրիում, Ճամբարակում, Վանաձորում, Ստեփանավանում, Ալավերդիում, Արմավիրում, Արբիլում, Արմավանում, Դիլիջանում, Կապա-

նում: Համագործակցում է տեղական հասարակական և միջազգային կազմակերպությունների, Հայաստանում արտասահմանյան դեսպանությունների և անհատ բարերարների հետ:

Կազմակերպությունը հանդիսանում է Ժնևյան կոնֆերանսի փախստականների հայրենադարձության և ինտեգրման աշխատանքային խմբի անդամ, ՀՀ կառավարությանն առընթեր հակակոռուպցիոն կոալիցիայի, ՀՀ ԱԺ նախագահին առընթեր փախստականների հարցերով զբաղվող ՀԿ-ների խորհրդի, ԿՐԻՆԳ-Ո դանիական փախստականների խորհրդի ցանցի, ինչպես նաև «Բանակն ու հասարակությունը» հասարակական կազմակերպությունների խորհրդի անդամ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՍՖ)

Հիմնադրվել է 1989 թ.,

գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում 1992 թ.:

Առաքելությունը

Նպաստելով քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ ապահովել ընտանիքների բարեկեցություն, երաշխավորված մայրություն, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն:

Կառուցվածքը

Կազմակերպության շրջանակներում գործում են սոցիոլոգիական, առողջապահական, իրավաբանական, հոգեբանական, կրթական, սոցիալական, մարդասիրական օգնության հանձնախմբեր, «Հույս», «Անհոգ մայրություն», «Բարի կամք» կենտրոնները:

«Հույս» ծգնաժամային կենտրոն

Նպատակը՝ նվազեցնել Հայաստանում ընտանեկան բռնության չափերը:

Խնդիրները՝

- փոխել հասարակության վերաբերմունքը ընտանեկան բռնության նկատմամբ,
- նպաստել ընտանեկան բռնության կանխարգելմանը,
- կազմակերպել բազմակողմանի աջակցություն ընտանեկան բռնության զոհերին:

«Անհոգ մայրություն» կենտրոն

Նպատակը՝ երաշխավորել առողջ և անհոգ մայրություն:

Խնդիրները՝

- բարձրացնել հղի կանանց իրազեկության և գիտելիքների մակարդակը,
- ապահովել հղի կանանց իրավունքների պաշտպանությունը,
- ապահովել հղի և մայրացած կանանց առողջության պահպանումը,
- ապահովել հղի և մայրացած կանանց սոցիալ-հոգեբանական կայունությունը:

«Բարի կամք» համայնքային կենտրոն

Նպատակը՝ նպաստել համախմբված քաղաքացիական հասարակության կայացմանը: Խնդիրները՝

- բացահայտել համայնքի ներքին ռեսուրսները,
- բարձրացնել համայնքի անդամների իրազեկության և գիտելիքների մակարդակը,
- համախմբել համայնքի ներքին ռեսուրսները,
- նպաստել համայնքի բնակչության խնդիրների լուծմանը,
- մշակել և իրականացնել համայնքի զարգացմանն ուղղված ծրագրեր:

Կազմակերպության շահառուները բազմազավակ ընտանիքներն են, հղի կանայք, երեխաները, ընտանեկան բռնության զոհերը և Քանաքեռ-Զեյթուն համայնքի անդամները:

Գործունեության ուղղությունները

- «Թեժ գիծ» վստահության հեռախոս:
- Խորհրդատվական ծառայություններ (իրավաբանի, հոգեբանի, սոցիալական աշխատողի, մանկաբարձ-գինեկոլոգի, մանկաբույժի, մանկավարժի):
- Լուսավորական աշխատանք՝ իրավական, առողջապահական, հոգեբանական, կրթական և այլ բնույթի դասընթացների անցկացում:
- Տեղեկատվական աշխատանք՝ տեղեկատվական թերթիկների, ձեռնարկների, լրատուի, ամփոփագրերի և տեսանյութերի թողարկում:
- Ընտանեկան բռնության զոհերի հոգեբանական վերականգնում:
- Ժամանակավոր օթևան և անվտանգություն:
- Համայնքային լսումների, կլոր սեղանների, սեմինարների անցկացում:
- Համագործակցություն ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՉԼՄ-ների հետ:
- Բարեգործական միջոցառումների կազմակերպում:

Իրականացված ծրագրեր

- «Մասիսի շրջանի փախստական կանանց առողջապահական գիտակցության կառուցում» (1995թ., ՄԱԶԾ-ի աջակցությամբ):
- «Եղեգնաձորի շրջանի բազմազավակ կանանց առողջապահական գիտակցության

- կառուցում» (1996թ., Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ):
- «Առողջություն երեխաներին» (1996թ., Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ):
- «Աշխատանքի ուսուցում սոցիալապես անապահով կանանց համար» (1997թ., «Փրկեք երեխաներին» կազմակերպության աջակցությամբ):
- «Սոցիալապես անապահով բնակչության համար մատչելի սպառողական շուկայի ստեղծում» (1998թ., ՄԱԿ-ի ՓԳ-Հ-ի և ԱՀՀ ՀԿ կենտրոնի աջակցությամբ):
- «Աշխատանքով հոգանք մեր կարիքները» (1998թ., ՊՀԾ-ի աջակցությամբ):
- «Նպատակային օգնություն ըստ իրական կարիքի» (1999թ., »Եվրագիա« հիմնադրամի աջակցությամբ):
- «Կրծքով կերակրելու քաջալերման տեղեկատվական արշավ» (1999թ., ՄԱԿ-ի Սանկական հիմնադրամի (UNICEF) աջակցությամբ):
- «Հանրային առողջապահության ոլորտում հանրային քաղաքականության փոփոխման քարոզչական նախաձեռնություն» (1999թ., ԱՀՀ ՀԿ կենտրոնի աջակցությամբ):
- «Համայնքների ներգրավում հասարակական գործունեության մեջ և շահառուների սեփական կարողությունների բարձրացում» (1999թ., ՄԱԿ-ի ՓԳ-Հ-ի աջակցությամբ):
- «Խաղաղություն քո տանը» (2001-2002թթ., «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության աջակցությամբ):
- «Համախմբված քաղաքացիական հասարակության համայնքային մոդելի հիմունքներ» (2002-2003թթ., «Եվրագիա» հիմնադրամի աջակցությամբ):
- «Բազմազավակ ընտանիքների սոցիալական պաշտպանության հանրային քաղաքականության փոփոխման քարոզչական նախաձեռնություն» (2002թ., ԱՀՀ ՀԿ կենտրոնի աջակցությամբ):
- «Հույս» ճգնաճամային կենտրոն (2002-2004թթ., ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ):
- «Անհոգ մայրություն» (2004թ., ԱՀՀ ՀԿ կենտրոնի և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ):
- «ՀԿ ֆինանսական կայունության ապահովման երաշխիքներ» (2004թ., ԱՀՀ ՀԿ կենտրոնի աջակցությամբ):
- «Բարի Կամք» համայնքային կենտրոնի կայուն զարգացումը՝ համախմբված քաղաքացիական հասարակության կայացման երաշխիք» (2004-2005թթ., «Եվրագիա» հիմնադրամի աջակցությամբ):

ՀՄՖ-ն իրականացրել է մաս մարդասիրական օգնության ծրագրեր, որոնց աջակցել են բազմաթիվ միջազգային կազմակերպություններ (UMCOR, World Vision, ADRA, FAR, OXFAM, Feed the Children/U.K., Canadian Feed the Children, CNF, IRD, Counterpart International և ուրիշներ):

ԿԱՆԱՆՑ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Կանանց հանրապետական խորհուրդը (ԿՀԽ) հիմնադրվել է 1987թ., հանրապետական առաջին կոնֆերանսում: 1991թ. հրավիրվել է ԿՀԽ-ի երկրորդ, 1997թ.՝ երրորդ և 2000թ.՝ չորրորդ կոնֆերանսը: 1992թ. փետրվարին կազմակերպությունը ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել է որպես հասարակական կազմակերպություն: 1997թ. հուլիսին և 2000թ. դեկտեմբերին ԿՀԽ-ն վերագրանցվել է: Գործունեության ոլորտը կանանց իրավունքների և շահերի պաշտպանությունն է:

ԿՀԽ -ի առաքելությունն է.

- Նպաստել կանանց առաջընթացին հանրապետության հասարակական-քաղաքական, տնտեսական և սոցիալական բնագավառներում:
- Միավորել կանանց ջանքերը հանրապետությունում կանանց դերի, նրանց կարգավիճակի բարձրացման գործընթացներում:
- Աջակցել հանրապետության զարգացման գործընթացներում գենդերային հավասարակշռության ապահովման գործին:

ԿՀԽ-ն Պեկինյան միջազգային կոնֆերանսին ընդառաջ և հետպեկինյան ժամանակահատվածում նախաձեռնել և իրականացրել է հետևյալ միջոցառումները:

1991-1994թթ.

- ԿՀԽ-ն, կարևորելով լրատվական միջոցների նշանակությունը, հիմնադրեց և ՀՕՄ-ի ֆինանսական աջակցությամբ հրատարակեց (1991-1994թթ.) «Առագաստ» կանանց շաբաթաթերթը (գլխ. խմբագիր՝ Ա.Պետրոսյան):
- 1992թ. մինչև այսօր իրականացվում է «Առանց կանանց չկա դեմոկրատիա» ծրագիրը:
- 1993թ. ԿՀԽ-ն Պեկինյան կոնֆերանսին նախապատրաստվելու նպատակով ազգային հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտության մասին հարցով դիմեց ՀՀ կառավարություն և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ:

1994-1995թթ.

- ՀՀ կառավարության հրամանագրով ԿՀԽ-ի նախագահը ընդգրկվեց ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի կազմում, մասնակցեց կառավարական զեկույցի նախապատրաստմանը և մշակեց կազմակերպության առաջարկությունները կանանց իրավիճակի վերաբերյալ:
- ԿՀԽ -ի՝ հանրապետության կանանց իրավիճակի վերաբերյալ այլընտրանքային զեկույցը Պեկինում հանձնվեց կոնֆերանսի քարտուղարությանը: Նախապես զեկույցը ներկայացվեց հանրապետության իշխանության բոլոր ճյուղերին:
- Պեկինին ընդառաջ Երևանում և Հայաստանի շրջաններում անցկացվեցին մի շարք

միջոցառումներ՝ մամլո ասուլիսներ, կլոր սեղաններ, միջազգային սեմինար:

- 1994թ., համաձայն պեկինյան «Աղջիկ-երեխաներ» օրակարգի, ԿՀԽ-ի նախաձեռնությամբ հիմնադրվեց «21-րդ դարի երիտասարդ լիդերներ» դպրոցը, որը կոչված է ազգային և միջազգային փորձի հիման վրա կրթելու սաներին, ապահովելու սերնդափոխություն կանանց շարժման մեջ: 1994-2004թթ. ընթացքում «Երիտասարդ լիդերներ» դպրոցը հասարակական հիմունքներով գործեց Երևանի 6 համայնքներում և 6 մարզերում: Ծրագրին աջակցել են ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF) և Պարենի համաշխարհային ծրագիրը (WFP): Ավարտական վկայականներ են ստացել ավելի քան 1000 սաներ:
- 1995թ. ԿՀԽ-ի նախագահը ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի (ՄԱՁԾ) աջակցությամբ մասնակցեց պեկինյան ճեպընթաց ծրագրին և Պեկինում՝ ոչ կառավարական կազմակերպությունների Ֆորումին:
- 1995թ. ընթացքում՝ հետպեկինյան ժամանակահատվածում, Հայաստանի ողջ տարածքում ԿՀԽ -ն անցկացրեց պեկինյան օրակարգին նվիրված 6 մամլո ասուլիս, 8 գիտա-սրահայտիկ սեմինար, 15 կլոր սեղան և սոցիոլոգիական հարցում 1200 կանանց շրջանում: Այդ միջոցառումները լայնորեն լուսաբանվեցին հանրապետության ՋԼՄ-ներում:
- 1995թ. ԿՀԽ -ն դիմեց կառավարությանը՝ առաջարկելով գործողությունների ազգային ծրագիր մշակելու նպատակով կազմակերպել Պեկինի կոնֆերանսի կառավարության պատվիրակության և ոչ կառավարական կազմակերպությունների ֆորումի մասնակիցների հանդիպում:

1996 -1998թթ.

- 1996թ. ԿՀԽ-ի «Ֆորում» ծրագրի շրջանակներում, «Եվրագիա» հիմնադրամի աջակցությամբ, հրավիրվեց առաջին հետպեկինյան կոնֆերանսը, որին մասնակցեցին Երևանի և հանրապետության 48 շրջանների 560 պատվիրակներ: Քննարկվեցին 15 զեկուցումներ և ընդունվեց «Պատասխանատվություն և պահանջ» եզրափակիչ փաստաթուղթը, որը ներկայացվեց իշխանության բոլոր ճյուղերին:
- 1996թ. կոնֆերանսի նյութերով կազմվեց և տպագրվեց «Պեկին-Երևան՝ մեկ տարի անց» ձեռնարկը, նկարահանվեց «Աշխարհին նայենք կանանց աչքերով» տեսաֆիլմը, որը ցուցադրվեց հեռուստատեսությամբ:
- ԿՀԽ-ի նախաձեռնությամբ կազմակերպվեցին հանդիպումներ ՀՀ կառավարության և կառավարական կառույցների, ՀՀ նախագահի, Ազգային ժողովի խոսնակի և վարչապետի հետ, որոնց ընթացքում ներկայացվեցին ԿՀԽ-ի կողմից մշակված առաջարկությունները գեներալային հարցերի վերաբերյալ:
- Պեկինյան գաղափարները տեղայնացնելու նպատակով իրականացվեց «Համայնքների զարգացումը և կանայք» ծրագիրը:
- 1996-1998թթ. ԿՀԽ-ի նախագահը՝ որպես փորձագետ, մասնակցեց «Նովոյե Վրեմյա» թերթի «Դամի ի Գասպադա» («Տիկնայք և պարոնայք») հավելվածի հրատարակման գործին (խմբագիր՝ Ն. Մանուչարովա): Այն իրականացվել է «Եվ-

րագիս» հիմնադրամի ֆինանսավորմամբ:

- 1997թ. ԿՀԽ-ի նախաձեռնությամբ անցան կանանց իրավիճակին նվիրված առաջին խորհրդարանական լուսնները:
- 1997թ. IWRAW միջազգային կազմակերպության հրավերով ԿՀԽ -ի նախագահը դիտորդի կարգավիճակով մասնակցեց ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի (CEDAW) աշխատանքներին, որտեղ քննարկվեց հայաստանի կառավարության առաջին զեկույցը:
- Նյու Յորքից վերադառնալուց հետո հրավիրվեց մամուլի ասուլիս, անցկացվեց սեմինարների շարք լրագրողների և ՀԿ-ների ղեկավարների մասնակցությամբ: Արդյունքում տպագրվեց «Կոնվենցիա՝ երկու տեսակետ» ձեռնարկը, որում համադրված էին կառավարական զեկույցի և ԿՀԽ-ի տեսակետները ՄԱԿ-ի 1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի իրականացման վերաբերյալ:
- 1997-1998թթ. «Նովոյե Վրեմյա» թերթի՝ «Դամի ի գասպարա» հավելվածի ծրագրի շրջանակներում տպագրվեցին «Պեկին-Երևան՝ երկու տարի անց» և «Պեկին-Երևան՝ երեք տարի անց» ժողովածուները:
- 1998թ. ԿՀԽ-ն նախապատրաստեց առաջարկներ կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի վերաբերյալ և ակտիվ մասնակցություն բերեց այդ ծրագրի ընդունման լրբիմզի գործընթացներում:

1999թ.

- Հասարակայնության և պետկառույցների ուշադրությունը Ազգային ծրագրի կիրարկման խնդրի վրա սևեռելու նպատակով ԿՀԽ-ն նախաձեռնեց «Նոր իմպուլս Պեկինին: Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրին՝ գործուն մեխանիզմներ» ծրագիրը, որի շրջանակներում հանրապետության 10 մարզերում կազմակերպվեցին սեմինարներ, կլոր սեղաններ, մրցանակաբաշխություն՝ Պեկինի հիմնադրույթներն արժարժող լավագույն հրապարակման համար: Ամփոփիչ կլոր սեղանի աշխատանքներին մասնակցեցին ԱԺ պատգամավորներ, ներկայացուցիչներ ՀՀ կառավարությունից, ՄԱԿ-ից, նախարարություններից, ՀԿ-ներից և ԿՀԽ -ի մարզային կառույցներից: Եզրափակիչ փաստաթուղթը ներկայացվեց հանրապետության իշխանության բոլոր ճյուղերին:
- ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (WFP) աջակցությամբ ԿՀԽ-ն իրականացրել է «Կանայք, զենդերը և տեղական ինքնակառավարումը» ծրագիրը, որի շրջանակներում 15 համայնքներում, 3 մարզերում և հանրապետական կոնֆերանսի ընթացքում վերստին քննարկվեցին պեկինյան օրակարգը և զենդերային իրավիճակը հանրապետությունում: Արդյունքներն ամփոփվեցին «Կանայք, զենդերը և տեղական ինքնակառավարումը» ձեռնարկում:
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ (UNFPA) ԿՀԽ -ն, «Հանուն ընտանիքի և առողջության» ասոցիացիան և ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնն իրականացրեցին համատեղ ծրագիր, որի շրջանակներում քննարկվեցին 1994թ. Կահիրեի կոնֆերանսի հանձնարարականները և պեկինյան

օրակարգի հարցերը: ԿՀԽ -ի նախագահը 19 համայնքներում հանդես եկավ «Գեո-դերային իրավիճակը հանրապետությունում» ելույթով: Ծրագրի արդյունքներն ամփոփվեցին «Կահիրե-Երևան` հինգ տարի անց» ձեռնարկում:

2001-2004թթ.

- ԿՀԽ-ն` որպես IFES միջազգային կազմակերպության ռազմավարական գործընկեր, իրականացրեց «Քաղաքացիների իրազեկությունը եվ մասնակցությունը Հայաստանում» ծրագրի` կանանց մասնակցությանը վերաբերվող բաժինները: Այդ ծրագիրը ֆինանսավորվում էր ԱՄՆ Սիջազգային զարգացման գործակալության կողմից (USAID): Չորս տարիների ընթացքում ծրագրի շրջանակներում ԿՀԽ-ն կազմակերպեց 510 միջոցառում հետևյալ ուղղություններով:

Համագործակցություն հասարակական կազմակերպությունների (ՀԿ) հետ

- Իրականացվեցին միջոցառումներ` ուղղված ԿՀԽ -ի կայուն զարգացման ապահովմանը:
- Ձևավորեց կանանց ՀԿ-ների մշտապես գործող կլոր սեղան:
- Նախաձեռնվեց կանանց հիմնահարցերով զբաղվող 56 ՀԿ-ների լիդերների հանդիպումը ՀՀ վարչապետի հետ, որի ընթացքում քննարկվեցին ՀԿ-ների և իշխանությունների համագործակցության հարցերը (2002թ., 12 ապրիլի):
- 30 ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվեց Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի նախագիծը (2003թ., 27 մայիսի):
- Երևանում և հանրապետության 8 մարզերում շահագրգիռ ՀԿ-ների ներկայացուցիչներից ձևավորվեցին Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի իրականացման մոնիտորինգի խմբեր (2004թ.):

Համագործակցություն օրենսդիր և գործադիր իշխանությունների հետ

- ԿԸՀ-ն նախաձեռնեց խորհրդարանական լսումների հրավիրումը, որոնց ընթացքում քննարկվեցին քաղաքականության մեջ և կառավարման ոլորտում կանանց լիարժեք մասնակցությունն ապահովելու հարցերը, Ազգային Ժողովին ներկայացվեց առաջարկությունների փաթեթ (2002թ. 23 ապրիլի):
- ԱԺ-ին ներկայացվեցին ԿՀԽ-ի առաջարկությունները սահմանադրական բարեփոխումների, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և աշխատանքային օրենսգրքի նախագծերի, ՀՀ Ընտարական օրենսգրքի բարեփոխումների վերաբերյալ:
- Կազմակերպությունը շարունակեց քննարկումները, տեղեկատվական նյութերի առաքումը օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչներին` ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի վավերացման հար-

ցը ԱԺ-ի օրակարգում ներառելու համար:

- Կազմակերպությունը քննարկեց կանանց և երեխաների բուժօգնության մատչելիության հարցերը՝ ներկայացնելով առաջարկություններ ՀՀ առողջապահության նախարարությանը (2003թ., 8 ապրիլի),
- Մասնակցեց Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի (ԱԾ) մշակման գործընթացներին՝ ներկայացնելով 19 առաջարկություններ, որոնք ներառվեցին ԱԾ-ում (2003-2004թթ.),
- Կազմակերպեց ԱԾ-ի ներկայացմանը նվիրված միջոցառումների շարք Երևանում և 10 մարզկենտրոններում, որոնց ընթացքում ձևավորվեցին ԱԾ-ին աջակցող և ԱԾ-ի շրջանակներում համայնքային գործողությունների ծրագրեր մշակող աշխատախումբային 11 խմբեր (2004թ., հունիս-օգոստոս):

Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) հետ

- ԿԸՀ-ն Երևանում և Սյունիքի մարզում կազմակերպեց ՏԻՄ-երի հիմնախնդիրներին և ՀԿ-ների հետ նրանց համագործակցությանը նվիրված կլոր սեղաններ:
- Քննարկեց համայնքների զարգացման գործընթացներում կանանց մասնակցության խթանմանը նվիրված խնդիրները: Մշակված հանձնարարականները ներկայացվեցին այն համայնքների ՏԻՄ-երին, որտեղ գործում են ԿՀԽ -ի կառույցները: Հանձնարարականների հիման վրա համատեղ մշակվում են համագործակցության ծրագրեր:

Աշխատանք ՁԼՄ-ների հետ

ԿԸՀ-ն կազմակերպեց՝

- հանրապետության 10 թեթերում 1998-2001թթ. կանանց հիմնախնդիրներին նվիրված հրապարակումների ուսումնասիրություն,
- կանանց հիմնախնդիրներին նվիրված հոդվածների վերլուծություն-մրցույթ,
- լրագրողների 3 կլոր սեղան ՁԼՄ-ների և ՀԿ-ների համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- հանդիպում երիտասարդ լրագրողների հետ, քննարկվեցին գեներային հիմնախնդիրները և ներկայացվեց Կանանց վիճակի բարելավմանը նվիրված ազգային ծրագիրը (2004թ., հունիս),
- ԱԾ-ում ներառված հիմնահարցերի վերաբերյալ տպագրված և հեռարձակված հոդվածների, ռադիո-հեռուստատեսային ակնարկների մրցույթ երիտասարդ լրագրողների շրջանում (2004, սեպտեմբեր):

Կանանց միջազգային օր (ԿՄՕ)

- ԿԸՀ-ն ամեն տարի մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը կազմակերպել է ամենամյա քա-

րոզարշավ: Չորս քարոզարշավների ընթացքում ԿՀԽ-ի կառույցների ուժերով կազմակերպված 429 միջոցառումներին մասնակցել է ավելի քան 45000 մարդ: Կազմակերպվել են մամուլ ասուլիսներ, հանդիսավոր արարողություններ, համայնքների կանանց խնդիրների շուրջ քննարկումներ և հանդիպումներ պաշտոնյաների հետ, բարեգործական միջոցառումներ՝ այցելություններ ծննդատներ, վետերան, միայնակ և տարեց կանանց, անվճար բուժօգնություն և դեղորայքի բաշխում (2001-2004թթ.):

ԿԻՆ ՆԱԽԿԻՆ ԱՅԱՏՈՎԱԿՈՐՆԵՐ, ԿԻՆ ՔԵԿՆԱԾՈՒՆԵՐ

- Կազմակերպությունն անցկացրել է կին նախկին պատգամավորների կոնֆերանս (2001, 27 մարտի):
- Ձևավորել է կին նախկին պատգամավորների աշխատանքային խումբ:
- Հիմնել է «Կանայք և ընտրությունները» 19 ակումբ, որոնք կին նախկին պատգամավորների և ԿՀԽ-ի կառույցների մասնակցությամբ կազմակերպել են կին թեկնածուների հավաքագրման, ուսուցման և սատարման գործընթացները (2002-2003):
- Ակումբներում կազմակերպվել են քննարկումներ՝ նվիրված ընտրություններում կանանց մասնակցության ռազմավարությանը և անցած ընտրություններից «քաղված դասերի» վերլուծությանը:
- Կազմակերպությունը Ծաղկածորում (2002, հունիս և օգոստոս) կազմակերպել է ՏԻՄ-երի ընտրություններում առաջադրված կին թեկնածուների երկու սեմինար-խորհրդակցություն:
- Անցկացրել է 2002թ. ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքներն ամփոփող համաժողով (2002, 17 դեկտեմբերի):
- Հրավիրել է ԱԺ ընտրություններում առաջադրված կին թեկնածուների սեմինար-խորհրդակցություն (2003, 29 ապրիլի):
- Ստեղծել է տվյալների շտեմարան ՏԻՄ-երի և ԱԺ ընտրություններում առաջադրված կին թեկնածուների վերաբերյալ:
- Իրականացրել է 2002-2003թթ. տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), նախագահական և խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելություն՝ հավաքագրելով 475 կին դիտորդ:
- Կազմակերպել է դիտորդների ուսուցում:
- Պատրաստել է վերջին երեք ընտրություններում ԿՀԽ-ի դիտորդական առաքելության արդյունքներն ամփոփող զեկույցներ և ընտրական գործընթացների բարելավման առաջարկություններ, որոնք ներկայացվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, միջազգային կազմակերպություններին, շահագրգիռ ՀԿ-ներին, տեղադրվել են Ինտերնետում:

Աշխատանք երիտասարդության հետ

Կազմակերպությունը ձեռնարկել է՝

- «Հայ կինը և պետականությունը» թեմայով շարադրությունների մրցանակաբաշխություն բարձր դասարանի աշակերտների շրջանում,
- երիտասարդ նկարիչների երկու ցուցահանդես՝ «Հայ կնոջ դիմանկարը» խորագրով,
- կանանց ու երիտասարդների ներգրավման և ուսուցման ծրագրեր, սեմինարներ, քննարկումներ,
- երիտասարդական աշխատանքային խմբերի (ԵԱՂ) ձևավորում Սյունիքի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի մարզերում և Երևանում, որոնք հանդես են գալիս կամավորական նախաձեռնություններով, մասնակցություն բերում համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանը:
- ԿՀԽ-ի և IFES-ի «Բարի կամք, բարի գործ, բարի ելք» խորագրով միջմարզային միջոցառումների շրջանակներում ԿՀ -ի ներկայացուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվել է կամավորական 161 միջոցառում, որոնց մասնակցել է շուրջ 14000 մարդ:

Աշխատանք գյուղի կանանց հետ

Կազմակերպել է հանդիպումներ, ուսումնասիրություններ, թրեյնինգներ, սեմինարների շարք, կլոր սեղաններ, որոնց ընթացքում քննարկվել են գյուղի կանանց հիմնախնդիրները, նրանց մասնակցությունը համայնքների զարգացման գործընթացներին, ինչպես նաև Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագիրը:

Տեղեկատվության տարածում

- Կազմակերպությունը հրատարակել և տարածել է տեղեկատվական նյութեր՝ նվիրված հանրապետության կանանց վիճակին, նրանց հիմնախնդիրներին և մասնակցությանը ընտրություններին:
- Նախաձեռնել է կանանց առաջնորդության, քաղաքացիական և քաղաքական մասնակցության խնդիրներին նվիրված հեռուստահաղորդումներ, ռադիոհաղորդումներ և հոդվածներ հանրային ՉԼՄ-ներում:
- Հասարակայնության շրջանում տարածել է ԿՀԽ-ի և IFES-ի կողմից պատրաստված տեղեկատվական նյութեր մարտի 8-ի, երիտասարդների, գյուղաբնակ և քաղաքաբնակ կանանց քաղաքացիական նախաձեռնությունների խթանման և ՏԻՄ-երի հետ համագործակցության, Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի և դրա շրջանակներում համայնքներում գործողություններ իրականացնելու վերաբերյալ:
- Ստեղծել է ԿՀԽ -ի ինտերնետային էջը, որտեղ պարբերաբար ներկայացվում է տեղեկատվություն ԿՀԽ -ի գործունեության վերաբերյալ:

ԿՀԽ-ի գործունեության արդյունքում՝

- հասարակության, իշխանությունների և լրատվամիջոցների շրջանում բարձրացել է իրազեկությունը կանանց, ընտանիքների և երեխաների հիմնախնդիրների վերաբերյալ,
- համայնքներում բարձրացել է կանանց և երիտասարդության քաղաքացիական ակտիվությունը,
- ԿՀԽ-ի, կին պատգամավորների աշխատանքային խմբի և «Կանայք և ընտրությունները» ակումբների գործունեության շնորհիվ կին թեկնածուները նեցուկ ունեցան նախընտրական շրջանում,
- ստեղծվեց շտեմարան ՏԻՄ-երի և խորհրդարանական ընտրությունների կին թեկնածուների վերաբերյալ,
- ԿՀԽ-ի սեմինարների մասնակից կին թեկնածուներից մեկն ընտրվեց համայնքապետ, ուրը՝ ավագանու անդամ, երկուսը՝ ԱԺ պատգամավոր,
- ԿՀԽ-ի 12 համայնքային կառույցներն ստացան իրավաբանական անձի կարգավիճակ,
- տպագրվեցին տեղեկատվական նյութեր՝ «Կանայք և մամուլը» ձեռնարկը (1500 օրինակ), «Հայաստանի կանայք անցումային ժամանակահատվածում» բուկլետը (4000 օրինակ), «Ինչու՞ է անհրաժեշտ կանանց մասնակցությունը ընտրություններում» թերթոնը (4000 օրինակ) և «Ինչպե՞ս հաղթել ընտրություններում» (500 օրինակ), «Կանայք և ընտրությունները» ձեռնարկները (400 օրինակ), տեղեկատվական փաթեթ (1000 և 250 օրինակ), «Ազգային ծրագիր՝ երկու տեսակետ» ձեռնարկը (1000 օրինակ), «Ինչպե՞ս կարող են կանայք և ՀԿ-ները ներազդել Ազգային ծրագրի կիրարկման գործընթացների վրա» (1000 օրինակ) և «Ազգային ծրագրի հիմնախնդիրներից անցում դեպի համայնքային կարիքներ» թերթոնները (1000 օրինակ),
- զարգացում ապրեց ՀԿ-ների համագործակցությունը իշխանությունների, ՏԻՄ-երի և ՋԼՄ-ների հետ,
- Կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրում ներառվեցին ԿՀԽ-ի առաջարկությունները:

2001-2004թթ. ԿՀԽ-ն համագործակցել է մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները.

- ԿՀԽ-ի նախագահը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) հայաստանյան գրասենյակի առաջարկությամբ մասնակցել է Ստոկհոլմում 2001թ. հունիսին կայացած տարածաշրջանային կոնֆերանսին, որը քննարկել է «Մերունդը վտանգված է» հիմնախնդիրները: Հետագայում հարցը քննարկվեց ԿՀԽ-ի նախագահության նիստում, որոշվեց ՀԿ-ների համագործակցությամբ տարածել Հայաստանում և կիրարկել Ստոկհոլմյան կոնֆերանսի ընդունած հռչակագրի հանձնարարականները:

- UNICEF-ի աջակցությամբ ԿՀԽ-ի նախագահը՝ որպես ժամանակավոր համակարգող, նախաձեռնեց Հայաստանում երեխաների հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների համաժողովի կազմակերպումը և ՀԿ-ների ցանցի ստեղծման գործընթացները (2002թ. ապրիլ-հունիս):
- ԿՀԽ -ի նախագահը՝ որպես փորձագետ, մասնակցեց «Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» ՀԿ-ի կողմից հրավիրված «Կանանց ՀԿ-ների դերը քաղաքացիական հասարակությունում» մեկօրյա համաժողովի աշխատանքներին՝ հանդես գալով զեկուցումով (2002թ., սեպտեմբեր):
- ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ պատրաստվեցին կանանց իրավունքներին նվիրված թերթուհիներ, որոնք ընդգրկեցին «Կանայք և աշխատանքը», «Կանայք և ընտանիքը», «Գյուղի կանայք», «Զբաղվածություն և գործազրկություն», «Միջազգային իրավական փաստաթղթեր» թեմաները (2002-2003թթ.):
- ԿՀԽ -ն, ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամի (UNIFEM) աջակցությամբ և ՀՀ կրթության ու գիտության նախարարության մասնակցությամբ, հանրապետության հանրակրթական դպրոցներում կազմակերպեց «Եթե լինեի խաղաղության դեսպան...» թեմայով շարադրությունների մրցույթը, որի ամփոփմանը մասնակցեցին մարզերի 104 աշակերտներ: Մրցանակները լավագույն շարադրությունների հեղինակներին հանձնեց ՀՀ Ազգային ժողովի նախագահը: Տպագրվեց «Եթե լինեի խաղաղության դեսպան...» ժողովածուն, որում զետեղվեցին հատվածներ լավագույն շարադրություններից:
- ԿՀԽ-ն ակտիվորեն մասնակցեց Հայաստանում «Խաղաղության կռալիցիայի» հիմնադրման գործընթացին, որն իրականացվում էր UNIFEM-ի «Կանայք հանուն հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում:
- ԿՀԽ-ն համակարգեց «Խաղաղության կռալիցիայի» անդամ կազմակերպությունների տեղեկատվական ապահովման գործընթացները: 2003-2004թթ. հայոց և ռուսաց լեզուներով տպագրվեցին տեղեկատվական 3 լրատու և « աղաղություն ամենեցուն» ամսագրի 5 համար:
- ԿՀԽ-ն նախաձեռնեց և «Խաղաղության կռալիցիայի» 3 կազմակերպությունների մասնակցությամբ Նոյեմբերյանում կազմակերպեց սահամանամերձ գյուղերի կանանց ներկայացուցիչների համատեղ կլոր սեղան (2004թ., սեպտեմբեր):
- ԿՀԽ-ի նախագահը՝ որպես համակարգող, մասնակցեց Հարավային Կովկասի հանրապետությունների «Խաղաղության կռալիցիայի» մի շարք տարածաշրջանային հանդիպումների:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կանանց իրավունքների կենտրոնը (ԿԻԿ) ոչ կառավարական, շահույթ չհետապնդող կազմակերպություն է, մարդկանց կամավոր միություն, որոնք համախմբել են իրենց

ջանքերը ընդհանուր նպատակների հասնելու համար: ԿԻԿ-ը ներկայացուցիչներ և մասնաճյուղեր ունի Հայաստանի 10 մարզերում:

1987 թվականից գործող «Կանանց ակումբի» հիման վրա 1990թ. նոյեմբերին ստեղծվեց «Հայուհի» կանանց միությունը և 1991 թվականի հունվարին գրանցվեց արդարատության նախարարությունում: Այն Հայաստանում առաջին գրանցված հասարակական կազմակերպությունն էր: 1997թ. նոյեմբերին «Հայուհի» կանանց միությունը, վերանայելով իր առաքելությունը և նպատակները, վերանվանվեց «Կանանց իրավունքների կենտրոն» (ԿԻԿ) և վերագրանցվեց արդարադատության նախարարությունում:

Առաքելությունը

Աջակցել Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացին՝ բարձրացնելով կանանց դերը հասարակական, սոցիալական, մշակութային և քաղաքական կյանքում, փոխել հասարակության ուշադրությունն ու վերաբերմունքը կանանց հիմնախնդիրների նկատմամբ, պաշտպանել կանանց իրավունքները և գենդերային իրավահավասարությունը կրթության, քարոզչության, հրապարակումների, լուսաբանման, խորհրդատվության, մշակութային ավանդական նախաձեռնությունների և նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով:

1997 թվականից առ այսօր Կանանց իրավունքների կենտրոնն աշխատում է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի բնագավառում և իր գործունեությունն իրականացնում է հետևյալ երեք ուղղություններով. ընտանեկան բռնություն, կանանց առևտուր, սեռական և վերարտադրողական իրավունք և առողջություն:

Հիմնական նպատակները

- կանխարգելել կանանց և նրանց երեխաների նկատմամբ բռնությունը,
- պաշտպանել կանանց վերարտադրողական և սեռական առողջությունը և իրավունքը,
- նպաստել կանանց լիդերությանը և մասնակցությանը որոշում կայացնելու գործընթացներին:

Ռազմավարությունը

- Իր նպատակներին հասնելու համար ԿԻԿ-ը մշակել է երկարաժամկետ ծրագիր՝ «Լուսաբանելու լուծումը կանանց նկատմամբ բռնության մասին» թեմայով, որն իրականացվում է քայլ առ քայլ:

Գործունեությունը

- **Կանանց լիդերության դասընթացներ** - ԿԻԿ-ը Հայաստանի հինգ հասարակական

կազմակերպությունների հետ միասին մասնակցել է արտերկրում 18 ամիսների ընթացքում կազմակերպված Կանանց լիդերության դասընթացների (երեք անգամ, մեկ շաբաթ տևողությամբ): Դասընթացների միջանկյալ ժամանակահատվածներում Հայաստանում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում նաև կանանց լիդերության դասընթացներ մարզերում:

- **«Թեժ գիծ»** - 1997թ-ից կազմակերպությունն իրականացնում է Հայաստանում առաջին վստահության հեռախոսային ծառայությունը, որի նպատակն է բռնության դեպքերի բացահայտումը և բռնության ենթարկված կանանց անվճար հոգեբանական, իրավաբանական խորհրդատվության և օգնության տրամադրումը:
- **Ճգնաժամային կենտրոն** - Այստեղ բռնության ենթարկված կանանց տրամադրվում է անվճար հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև սոցիալական ու բժշկական օգնություն:
- **Կանանց աջակցման խումբն** ընդգրկում է բռնությունից տուժած կանանց: մքի նպատակն է համախմբել այդ կանանց և անցկացնել խմբային հոգեբանական թերապիայի պարապմունքներ՝ կիրառելով արտթերապիայի և թատերաթերապիայի տարրեր:
- **Աշխատանքային հմտությունների դասընթացներ** - Բռնությունից տուժած կանանց համար անցկացվում են անգլերենի, համակարգչային, հաշվապահության, խոհարարության, վարսավիրության արտոնագրված դասընթացներ:
- **Ապաստարան և ժամանակավոր կացարան** - ԿԻԿ-ը Հայաստանում առաջինն է ստեղծել միջազգային նորմերին համապատասխանող ապաստարան և ժամանակավոր կացարան, որի նպատակն է ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց և նրանց երեխաներին օգնություն ցույց տալու միջոցով խզել բռնության փակ շրջանը և հասնել անկախ, ապահով, ինքնավստահ և բռնությունից զերծ ապրելակերպի: Այս գործունեությունն ընդգրկում է անվճար օթևանի և սննդի ապահովումը, ինչպես նաև Կանանց աջակցման խմբի, «Ընտանեկան օրվա», «Ծնողական օրվա», աշխատանքային հմտությունների դասընթացների կազմակերպումը:
- **Կրթական և իրազեկման ծրագիրն** անցկացվում է Երևանի և մարզերի գրադարաններում, ոստիկանության բաժանմունքներում, պոլիկլինիկաներում, համալսարաններում, դպրոցներում, գործակալություններում և այլուր:
- **Բազմաթեմատիկ դասընթացներ** - ԿԻԿ-ը իրավապահ մարմինների, զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների և առողջապահական ոլորտի աշխատակիցների համար կազմակերպում է բազմաթեմատիկ դասընթացներ ընտանեկան բռնություն և կանանց առևտուր, վերարտադրողական առողջություն և իրավունք թեմաներով: Դասընթացներն անցկացվում են ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի մարզերում:
- **Դասընթացներ դասվարների համար** - Կազմակերպությունն անցկացնում է դասընթացներ հետևյալ թեմաներով. կանանց իրավունքներ, ընտանեկան բռնություն և կանանց առևտուր, վերարտադրողական առողջություն և իրավունք, որոշումներ կայացնելու իրավունք:
- **Փաստաբանական ծառայություն** - Անհրաժեշտության դեպքում բռնությունից տու-

Ժած կանայք ապահովվում են փաստաբանով, որը դատարանում պաշտպանում է նրանց իրավունքները և շահերը:

- **STOPWAV ինտերնետային կայքի ազգային էջի նորացում** - ԿԻԿ-ը՝ որպես ազգային մոնիտոր, իրականացնում է «Դադարեցնել բռնությունը կանանց նկատմամբ» ինտերնետային կայքի ազգային էջի նորացումը կանանց նկատմամբ բռնության չորս տեսակների՝ ընտանեկան բռնության, սեռական հետապնդման, սեռական հանցագործության և կանանց առևտրի վերաբերյալ նյութերով:
- **ԿԻԿ-ը** ստեղծում է ֆինանսական կարողությունների զարգացման գործիքներ՝ կազմակերպության գործունեության մասին տեսաֆիլմի, գրքի ստեղծման և ինտերնետային կայքի նորացման միջոցով:
- **Տեղեկատվական և ուսուցման վիրտուալ կենտրոնի ստեղծում** - ԿԻԿ-ը համագործակցում է Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի և Ղրղզստանի հասարակական կազմակերպությունների հետ կանանց առևտրի վերաբերյալ համատեղ ինտերնետային կայքի և էլեկտրոնային տեղեկագրերի ստեղծման աշխատանքներում:
- **ՀՀ օրենսդրության գեներային վերլուծություն** - ԿԻԿ-ն իրականացնում է վերարտադրողական և սեռական առողջության և իրավունքի վերաբերյալ ՀՀ օրենսդրության գեներային վերլուծություն:
- **Ակտիվության 16 օր ընդդեմ գեներային բռնության** - Ամեն տարի ԿԻԿ-ը մասնակցում է «Ակտիվության 16 օր ընդդեմ գեներային բռնության» քարոզարշավին: 2004թ. նոյեմբերի 25-ին՝ Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրը, ԿԻԿ-ն իր գործունեությունն սկսեց «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության ազգային կոալիցիայի» ստեղծման նախաձեռնությամբ:
- **Ռադիո- և հեռուստատեսային ծրագրեր** – Պատրաստվում են կանանց նկատմամբ բռնությանը, վերարտադրողական առողջությանը և իրավունքներին նվիրված ռադիո և հեռուստատեսային ծրագրեր: Կազմակերպությունը հիմնել է Մամլո ակումբ լրագրողների՝ ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելու նպատակով:
- **Կանանց իրավունքների կենտրոնը** մասնակցում է նաև կոալիցիաների, աշխատանքային խմբերի, ցանցերի աշխատանքներին, ինչպես նաև սեմինարների, հանդիպումների, դասընթացների, կրթական և քարոզչական արշավների՝ կազմակերպված տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, պետական մարմինների և այլ ինստիտուտների կողմից:

ԿԻԿ-ն ունի կանանց իրավունքներին, հատկապես կանանց նկատմամբ բռնությանը և վերարտադրողական առողջությանն ու իրավունքին վերաբերող գրականությամբ ու տեսաֆիլմերով համարվող գրադարան (604 անվանում) և տեսադարան (61 ֆիլմ):

Հրատարակումներ

- «Կերպարվեստի բառագիր», 1996թ.:
- «Ճանաչենք մեր իրավունքները», 1998թ.:
- «Գեներալային խտրականություն աշխատանքի ոլորտում», 2000թ.:
- «Բռնություն կանանց նկատմամբ Անդրկովկասյան տարածաշրջանում», 2000թ.:
- «Ընտանեկան բռնությունը Հայաստանում», 2000թ.:
- «Ո՞ւմ դիմել օգնության հայցով», 2001թ.:
- «Իրական պատմություններ», 2001թ.:
- «Կանանց նկատմամբ բռնությունը Հայաստանում», 2001թ.:
- «Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից», 2001թ.:
- « ուսավիր որոգայթից», 2001թ.:
- «Կանանց իրավունքները. քայլ առ քայլ», 2002թ.:
- «Ընտանեկան բռնություն և մարդկանց առևտրի կանխումը», 2002թ.:
- «Ինչ է բռնությունը. (դու մենակ չես)», 2002թ.:
- Տեղեկագիր ԿԻԿ-ի 1998-2003թթ. գործունեության մասին, 2003թ.:
- «Իրավունքների շտեմարան», 5 գրքույկ, 2001-2002թթ.:
- «Ալկոհոլը և բռնությունը», 2004թ.:

Տեսաֆիլմերի նկարահանում

- «Մարդաստայն» (1998թ.)
Ֆիլմն անդրադառնում է Հայաստանում մարմնավաճառության հիմնախնդիրներին:
- «Մեր խոսքը» (2001թ.)
Ֆիլմաշարը բաղկացած է 3 ֆիլմից, որոնցում լուսաբանվում են կանանց իրավունքների պատմությունը, ընտանեկան բռնության և կանանց առևտրի հիմնախնդիրները:
- «Փակ շրջան» (2002թ.)
Ֆիլմը պատմում է արտագաղթի հիմնախնդրի մասին:
- «...Ապրելու համար» (2004թ.) Ֆիլմը Կանանց իրավունքների կենտրոնի գործունեության մասին է:
- ԿԻԿ-ն անդամակցում է** Ընդդեմ կանանց բռնության ազգային կոալիցիային, «Աստրա» Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կանանց ցանցին, «Արևելք-Արևմուտք» կանանց ցանցին, ԱՊՀ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կանանց ՀԿ-ների ԿԱՐԱՏ տարածաշրջանային կոալիցիային, «Էնջըլ» կոալիցիային:

Դոնոր կազմակերպություններ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (ՄՁԳ), «Կանայք կանանց համար», Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժին, ԱՀՀ ՀԿ կենտրոն, ՄԱԿ-ի ՓԳՀ, «Մամա Քեշ» կանանց հիմնադրամ, «Վինրոք Ինթեր-

նեշնր», ԱՄՆ Պետդեպարտամենտ, «Համաշխարհային ուսուցում», Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամ:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայ օգնության միությունը (ՀՕՄ) ոչ կառավարական, ոչ դավանական կանանց կազմակերպություն է, որը հոգում է հայ ժողովրդի կարիքները կամավոր, մարդասիրական և ընկերային հիմունքներով: ՀՕՄ-ը Հայաստանում գրանցվել է 1991թ. և շուրջ 1100 անդամներով գործում է Հայաստանի Հանրապետության 60 քաղաքներում և գյուղերում: ՀՕՄ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում իրավական, ժողովրդավարական պետության ձևավորման և քաղաքացիական հասարակության կերտման գործընթացին, օժանդակել հայ ժողովրդի ընկերային, կրթական, առողջապահական և բարեգործական ծրագրերի իրականացմանը:

Փորր բիզնեսի զարգացում

ՀՕՄ-ը ապահովում է համապատասխան ուսուցում և նյութա-տեխնիկական բազա՝ օժանդակելով կանանց տնտեսական գործունեության ծավալմանը: ԱՄՔՈՐ և «Լյուքսենբուրգ-Հադասահ» կազմակերպությունների հովանավորությամբ ստեղծվել է դրամագլուխ, որը արտադրություն կազմակերպելու նպատակով գումար է տրամադրում ձեռներեց կանանց: ՀՕՄ-ի նախաձեռնությամբ իրագործվել է «Հումանուշ» ծրագիրը, որի շրջանակներում վաճառվել են տնային պայմաններում պատրաստված պահածոներ:

Համայնքային զարգացում

Լոռու մարզի Արջուտ գյուղում, որը հիմնականում բնակեցված է փախստականներով, ՀՕՄ-ը ՄԱԿ-ի ՊՀԾ-ի և ՓԳՀ-ի օժանդակությամբ կառուցել է ջրատար, որի արդյունքում գյուղի բնակիչները ապահովվել են խմելու և ոռոգման ջրով: ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ՀՕՄ-ը ջերմամեկուսացրել է 35 առողջապահական և կրթական հաստատություն (Գյումրի, Վանաձոր, Մարալիկ), որի շնորհիվ ձմռան ամսիներին խնայվում է մեծ քանակությամբ վառելանյութ: Վերջին տարիներին ՀՕՄ-ը, համագործակցելով «ԷյթիՋի» կազմակերպության հետ, գյուղերի բնակչությանը բաշխել է սերմեր: «Վորլդ Վիժն» կազմակերպության հետ համատեղ ՀՕՄ-ը կարի մեքենաներ է տրամադրել փախստական կանանց՝ արտադրություն կազմակերպելու նպատակով: Նույն նպատակով Նորվեգական փախստականների խորհրդի հովանավորությամբ իրագործվել է «Բուրդ» ծրագիրը, որի շրջանակներում 130 կին փախստական հնարավորություն է ստացել նախաձեռնելու և իրականացնելու տնտեսական գործունեություն:

Առողջապահություն

ՀՕՄ-ը բժշկական սարքավորումներ և դեղորայք է տրամադրել հիվանդանոցներին և կազմակերպել է առողջապահական դասընթացներ բժիշկների և բուժքույրերի համար: ՄԱԿ-ի ՓԳ-Հ-ի և «Ֆուջի» կազմակերպության օժանդակությամբ փախստականներին տրամադրվել են անվճար ակնոցներ: Համաշխարհային առողջապահության կազմակերպության, ԱՄՔՈՐ-ի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի օժանդակությամբ իրագործվել են Կանանց վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ծրագրեր:

2003-2004 թթ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ ՀՕՄ-ը իրագործել է Մանկական հաշմանդամության վաղ բացահայտման և կանխարգելման ծրագիրը:

Քաղաքացիական հասարակություն

ՀՕՄ-ը կազմակերպել է բազմաթիվ դասախոսություններ և աշխատանիստեր կանանց հիմնահարցերի վերաբերյալ: ՀՕՄ-ի ներկայացուցիչը մասնակցել է Հասագայում կազմակերպված նույն թեմայով կոնֆերանսին:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ ՀՕՄ-ը իրագործում է «Ընտանեկան բռնությունների ուսումնասիրություն» ծրագիրը, որի նպատակն է կանանց և երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելումը սոցիալապես անապահով ընտանիքներում:

ԱՄՆ դեսպանատան հովանավորությամբ ՀՕՄ-ը իրականացնում է քրաֆիկինգի իրազեկության աստիճանի ուսումնասիրություն գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում:

Ծնողագուրկ երեխաներ

1992 թ.-ից ՀՕՄ-ը իրագործում է ծնողագուրկ երեխաների խնամակալության ծրագիրը. ավելի քան 5700 երեխա անհատ հովանավորների կողմից տարեկան 120 ԱՄՆ դոլար է ստանում:

1996 թ.-ից ՀՕՄ-ը սկսել է սննդի ծրագիր Գյումրիի, Չվարթնոցի հատուկ տիպի, Երևանի Նորքի, թիվ 12 և խոսքի ծանր խանգարում ունեցող երեխաների գիշերօթիկ դպրոցներում և Երևանի Ջեյթունի մանկատանը: ՀՕՄ-ի կամավորները իրագործում են սննդի ծրագիրը, ինչպես նաև հոգում են պահի անհրաժեշտությունից ծնված կարիքները: ՀՀ կառավարության կողմից ՀՕՄ-ին նվիրաբերվել է Դ-իլիջանի հանգստյան տունը, որտեղ ծնողագուրկ երեխաների համար կկազմակերպվեն ամառային ճամբարներ:

Կրթություն

1993 թ.-ից տարեկան 70 ուսանողի համար իրագործվում է «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունը:

Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների տեղական և տարածաշրջանային ցանցերի ստեղծում

Թրաֆիկինգի և հարակից խնդիրների կանխարգելման և պայքարի միջոցառումներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով քաղաքացիական հասարակության, կառավարական կառույցների և ՄԱԶԾ-ի շփումները և փոխգործակցությունն առավել բովանդակալից դարձնելու վճռակամությամբ, Հասարակական կազմակերպությունների տեղական և տարածաշրջանային ցանցերի ստեղծման ուղղությամբ Թրաֆիկինգի դեմ պայքարի ՄԱԶԾ-ի ծրագրի շրջանակներում նախապատրաստական լայնածավալ աշխատանքներ են իրականացվել, ներառյալ կանխարգելման աշխատանքների նախաձեռնումը կազմակերպված հանցավորության և դրա տարատեսակ դրսևորումների, հատկապես՝ թրաֆիկինգի և անկանոն միգրացիայի դեմ պայքարի ոլորտներում, ինչպես նաև կազմակերպված հանցավորության և դրա տարատեսակ դրսևորումների, հատկապես՝ թրաֆիկինգի և անկանոն միգրացիայի վերաբերյալ լրատվություն պատրաստող անկախ լրագրողների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների և լրագրողական ՀԿ-ների մասնակցությամբ ստեղծված՝ զանգվածային լրատվամիջոցների տեղական ցանցի շրջանակներում:

2005թ. հունվարի 20-ին տեղական ինը ՀԿ-ներ ստորագրեցին Հուշագիրը, ընդ որում՝ ՀԿ-ներից *մեկը* (որը գործում է առողջապահության ոլորտում) հայտարարեց, որ ստանձնում է ՀԿ-ների Տեղական ցանցի գործընկերոջ դերը: Հաջորդ օրը՝ հունվարի 21-ին, տեղական ցանցի անդամները և վրացական *հինգ* ՀԿ-ներ (որոնք միավորվել էին Ցանցի գործունեության կապակցությամբ) ստորագրեցին Տարածաշրջանային հուշագիրը: Ավելին, կազմակերպված հանցավորության և դրա տարատեսակ դրսևորումների, հատկապես՝ թրաֆիկինգի և անկանոն միգրացիայի վերաբերյալ լրատվություն պատրաստող *տասներեք* անկախ լրագրողներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և լրագրողական ՀԿ-ներ հունվարի 28-ին ստորագրեցին Չանգվածային լրատվամիջոցների ցանցի հուշագիրը:

Սա շրջադարձային զարգացում է՝ ևս մեկ քայլ թրաֆիկինգի կանխարգելման ուղղությամբ տեղական և տարածաշրջանային ՀԿ-ների միախմբման իմաստով: Վերստին հաստատելով իրենց կառավարությունների վճռակամությունը՝ պայքարելու թրաֆիկինգի դեմ, և հավուր պատշաճին հաշվի առնելով միջազգային և տարածաշրջանային իրավական փաստաթղթերը և մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները, ՀԿ-ների և զանգվածային լրատվամիջոցների տեղական և տարածաշրջանային ցանցերը համագործակցելու են կարողությունների ձևավորման, կառուցակարգային հզորացման, իրազեկության բարձրացման, քաղաքականության մշակման և իրականացման գործընթացին աջակցության, տուժածներին աջակցության ցուցաբերման, յուրաքանչյուր երկրին ներհատուկ՝ ուղեգրման և տուժածների վերադարձի և վերինտեգրման արդյունավետ ազգային համակարգերի ստեղծման և ներդրման, ինչպես նաև այս խնդիրների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման և հաշվետվությունների ներկայացման արդյունավետ մեխանիզմների կայացման ոլորտներում: Ցանցերը, մասնավորապես, հանձն են

առել՝ համագործակցելու ոչ միայն միմյանց, այլ նաև՝ այս ոլորտում աշխատող ազգային, տարածաշրջանային և միջազգային այլ կառույցների հետ: Նրանք հաստատական են՝ ապահովելու մարդու իրավունքների պաշտպանությունը, գործունեության ընթացքում հաշվի առնելու գեներալային տեսակետը և նպաստելու ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակների իրագործմանը:

www.antitrafficking.am ինտերնետային կայքի ստեղծումը և կատարելագործումը

Թրաֆիկինգի դեմ պայքարի ՄԱԶԾ-ի ծրագրի շրջանակներում օժանդակություն է ցուցաբերվում **www.antitrafficking.am** ինտերնետային կայքի ստեղծմանը և կատարելագործմանը, որը նախագծվել և շահագործվում է «Տեսալսողական լրագրողների միության» (SLU) կողմից: Հետագա փուլերում ինտերնետային կայքը կընձեռի նաև զրույցի («chat») և քննարկումների ֆորումի («discussion forum») հնարավորություն, որը բարենպաստ միջավայր կստեղծի՝ բարելավելու թե երկխոսությունը շահագրգիռ կողմերի և անձանց միջև, թե խորհրդատվության/մասնագիտական կարծիքների ստացման նպատակով հարցումներ կատարելու մեխանիզմը: Կնշակվի նաև կատարելագործված կայքի անգլերեն տարբերակը, որից կկարողանան օգտվել միջազգային հանրությունը և սփյուռքի համայնքները: Ինտերնետային կայքը նաև լրջորեն կնպաստի ՀԿ-ների և լրատվամիջոցների տեղական և տարածաշրջանային ցանցերի գործունեությանը:

ՄԱԿ-ի թեմատիկ խումբ. Թրաֆիկինգի դեմ պայքարի վերաբերյալ հանրության իրազեկվածության ենթախումբ

ՄԱԶԾ-ի նախագահությամբ գործող ՄԱԿ-ի Թեմատիկ խմբի շնորհիվ միջազգային հանրությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հաջողությամբ համագործակցում են և աջակցում Հայաստանի Հանրապետության Կառավարությանը քննարկումների հարթակ ստեղծելու, երկրում իրականացվող աշխատանքներին դոնորների ցուցաբերած օժանդակությունը քննարկելու, այս ոլորտում նոր զարգացումներին տեղեկանալու և տեղեկատվության փոխանակման դաշտ ստեղծելու հարցերում: 2004թ. ընթացքում ՄԱԿ-ի Թեմատիկ խմբի իրականացրած կարևորագույն միջոցառումներից էին Թրաֆիկինգի դեմ պայքարի քաղաքականության վերլուծությունը և արդյունքների և առաջարկությունների բաժանումը մասնակիցներին, ինչպես նաև հանրության իրազեկվածության հարցերով մասնագիտացած ենթախմբի ստեղծումը: Մշակվել և **www.antitrafficking.am** ինտերնետային կայքում տեղադրվել է հանրության իրազեկման գործողությունների աղյուսակ՝ ըստ առանձին կազմակերպությունների (ներառյալ տեղական ՀԿ-ներ): Անցկացվել է ռազմավարական քննարկում: Ուրվագծվել են հետագա աշխատանքները, իրականացվել է ՄՎՈԹ վերլուծություն՝ որպես առաջին քայլ Հանրության իրազեկվածության ռազմավարության և համատեղ ուղերձի մշակման ուղղությամբ: Ավելին, քննարկվել են համատեղ նախաձեռնությունների հնարավոր տարբերակներ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կազմակերպության առաքելությունն է՝ աջակցել ժողովրդավրդավարության և քաղաքացիական հասարակության, կանանց և ազգային փոքրամասնությունների իրավունքների, բազմակարծության, բազմազանության (մշակութային, լեզվական, կրոնական և քաղաքական) գաղափարների տարածմանը:

Մեր հեռահար նպատակն է՝ քաղաքացիական կրթության միջոցով նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը:

Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի «Կին գիտնականների միության» կողմից կատարված ծրագրերի ցանկը, «Պեկին+10» գործընթացներին շրջանակներում:

1. Կանանց իրավունքները մարդու իրավունքների և ազատությունների համատեքստում

- Սեմինարների շարք՝ նվիրված ընտրողների իրավունքների և իրավական փաստաթղթերի բացատրությանն ու քարոզչությանը (փախստականների համար):
- «Կանանց շարժումը և քաղաքացիական հասարակությունը Հայաստանում», կլոր սեղան
- Կրթական ծրագիր ընտրողների համար
- «Կանանց շարժումը և քաղաքացիական հասարակությունը», կլոր սեղան:
- «Գիտնական կանայք քաղաքացիական հասարակությունում», կլոր սեղան:
- «Քաղաքացիական հասարակությունը և հանդուրժողականությունը», կլոր սեղան
- Մարտի 8-ին նվիրված կլոր սեղան և երեկույթ
- Գենդերային հիմնահարցերին նվիրված սեմինար՝ կանանց և մարդու իրավունքների ՀԿ-ների անդամների համար
- «Աջակցելով կանանց քաղաքական մասնակցությանը. Ազգային ընտրություններ» բրոշյուրի հրատարակում
- «Աջակցելով կանանց քաղաքական մասնակցությանը. Տեղական ընտրություններ» բրոշյուրի հրատարակում
- «Կանանց կազմակերպությունների դերը ժողովրդական հասարակության զարգացման մեջ» կոնֆերանս
- «Կանայք, մշակույթը և հասարակությունը» ընթերցագրքի հրատարակում
- «Գենդեր. պատմություն, մշակույթ և հասարակություն» ընթերցագրքի հրատարակում
- «XX-րդ դարի հայ գիտնական կանայք» կենսագրական հանրագիտարան

2. Կինը և աղքատությունը

- «Կանայք և աղքատությունը», կլոր սեղան

3. Կինը և տնտեսությունը

Հավասար իրավունքների ապահովումը աշխատանքի և զբաղվածության ոլորտում

- «Օգնիր ինքդ քեզ», աջակցության ծրագիր՝ կանանց սեփական փոքր բիզնես ստեղծելու համար
- **Գյուղի կանայք**
- «Գյուղի կանայք քաղաքացիական հասարակությունում» սեմինարների շարք Հայաստանի յոթ մարզերում
- «Գյուղի կանայք քաղաքացիական հասարակությունում» կոնֆերանս

4. Կանայք և կրթությունը

- «Երիտասարդ աղջիկներին աջակցության կենտրոն»
- Անգլերեն լեզվի դասընթացներ կանանց կազմակերպությունների ղեկավարների համար
- Կանանց ՀԿ-ների առաջնորդների համար ուսուցողական դասընթացներ
- «Ոչ միայն հացիվ» բառարանների, դասագրքերի և ձեռնարկների հրատարակում փախստական կանանց համար
- Հայերեն լեզվի արագացրած դասընթացներ փախստականների համար
- «Երիտասարդ կանանց առաջնորդության ինստիտուտ»

5. Կինը և բռնությունը

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը

- «Բռնությունը ընտանիքում» կլոր սեղան
- **Կանանց առքուվաճառքը /թրաֆիկինգ/**
- «Նախազգուշացում կանանց» բրոշյուրի հրատարակում
- «Նախազգուշացում կանանց» կլոր սեղան
- «Կանանց առքուվաճառքը» կլոր սեղան

6. Կինը և զինված հակամարտությունները

«Փախստականների հոգեբանական և սոցիալական հարմարեցում և ինտեգրացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- «Հայոց լեզու և Ժողովրդավարության հիմունքներ», ուսուցողական ծրագիր Հայաստանի գյուղերում փախստական կանանց համար
- «Մանաչիք քո հայրենիքը» հոգեբանական և մշակութային հարմարեցման ծրագիր՝ փախստականների համար:
- «Հայոց լեզու» և մշակույթ, ամառային ամենամյա դասընթացներ փախստականների, սփյուռքահայության և ազգային փոքրամասնությունների համար:
- «Գրական հայերենի գիտական ոճը». գյուղական շրջաններում բնակվող փախստական կին ուսուցիչների վերապատրաստման ծրագիր
- «Կանայք և զարգացումը» կլոր սեղանների շարք

7. Աղջիկներ - երեխաներ

«Երեխաները մեր ապագան են» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- Սուրբ ծննդյանը նվիրված երեկույթի կազմակերպում՝ փախստականների և որբ երեխանների համար, Հայաստանի Հոգեկան առողջության հիմնադրամի հետ համատեղ:
- «Ամառային ամենամյա ճամբար՝ փախստական և տեղացի երեխաների համար»
- «Հանդուրժողականության ուսուցում » ուսուցողական ծրագիր փախստական և տեղացի երեխաների համար
- 2004թ. Միջաբզգային կանանց օրվան նվիրված շարադրությունների մրցույթ Հայաստանի բոլոր մարզերի բարձր դասարանների աղջիկների համար: